№ 6 (194) XVIII ՏԱՐԻ ՅՈՒՆԻՍ 1908

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԱՆ

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՐԷԱԿՑԻԱՆ ԵՒ ՍՈՑԻԱԼԻԶՄԸ

Դարձեալ ցարիզմը... Պարսկաստանի արիւնոտ ողբերգութեանը ևս միջամտեց նա իր սովորական ցինիկ վայրագութեամբ և հանգցրեց ազատարար հրդեհը... Ռէակցիան յաղթանակում է Շահերի պետութեան մէջ Ռուսաստանի շնորհիւ։ Պարլամենտը փլում է ռումբերի որոտի տակ, յեղափոխական պարագլուխները ճօճում են կախաղանների վրայ, մի սոսկալի ուրագան է անցնում ամբողջ երկրից, ազատութեան բիրտ դահիճները ասնում են արիւնալի յաղթանակը... Եւ այդ բոլորը՝ ցարական անարգ բռնապետութեան աջակցութեամբ, նրա խրախուսանքով, նրա ջանքերով։

Ռուս գեներալ Լեախովը, իբրև զօրքերի բարձրագոյն հրամանատար, նախագահում է աւերածի գործին, իտես ամբողջ քաղաքակիրթ աշխարհի։ Ռուսական անսանձ դիպլոմատիան խողխողում է մի փոքրիկ ժողովրդի սահմանադրութիւնն ու ազատութիւնը, առանց որևէ առարկութիւն լսելու արևմտեան „լիբերալ" ու „ռամկավարական" պետութիւններից... Այդտեղ է ներկայ վայրկեանի բոլոր շշմեցուցիչ տրագիզմը։ „Եւրոպան" չը կայ։ Նա մարել է կապիտալիստական չոր ու գձուձ ախորժակների յորձանքների մէջ։ Արևմտեան „մեծ հանրապետութիւնը" ըստ առաջնոյն քարշ է գալիս իր արևելեան դաշնակցի ետքից։ Գերմանիան իդէմս իր կառավարութեան ծափ է զարկում Պարսկաստանի ռէակցիային։ Անգամ Մեծ-Բրիտանիան, որ միակ շատ թէ քիչ վստահելի ոյժն էր, երբեմն դիմագրաւող ցարիզմի շահատակութիւններին —նա էլ հեռզհետէ խորասուզւում է ռէակցիայի տիղմի մէջ, շոգիանում են գլադստոնեան փառահեղ աւանդութիւնները և այսօր բախտի մի չարամիտ հեգնանքով՝ անգլիական պահպանողականների օրգան „Times"-ն է, որ ուժգին բողոքում է *quasi* ազատամիտ կուսակցութեան սարկամիտ քաղաքականութեան դէմ Պարսկաստանում։

Եւ այդպիսով ամբողջ մերձաւոր Արևելքում, Մակեդոնիայում, Հայաստանում, Պարսկաստանում ցարիզմը *carte blanche* է ստանում արևմտեան պետութիւններից՝ վարելու ըստ իր ազատ հայեցողութեան։

Անկման անդունդն է... կը բարձրանա՞յ երբևիցէ Եւրոպան այդ անդունդից...

Առ այժմ ռուս կառավարութիւնը միակ ու բացարձակ իրաւարարն է այդ դժբախտ ժողովուրդների ճակատագրի։ Նա սեղմում է իր սեփական ժողովրդին և արշաւում է մոլեգնօրէն հարևան ժողովուրդների ազատութեան դէմ։ Նա յաւերժացնում է ասիական վայրագ բռնակալութեան ռէժիմը իր սահմաններում և սիրով, եղբայրաբար ձեռք է մեկնում արևելեան դահճապետներին, երբ վերջինները նեղն են ընկնում։ Նա հանդիսանում է ռէակցիայի ամրակուռ պատնէշ ամբողջ արևելքում։

Եւ հանրապետական դաշնակիցը, գլուխ ունենալով „ամենաարմատական" մինիստրութիւնը շարունակում է գետնատարած սողալ նրա առջև, կատարել նրա բոլոր քմահաճոյքները։ Եւ ահա հանրապետութեան նախագահը գնում է միանգամ ևս սեղմելու դահճի արիւնաթաթախ ձեռքը, գնում է միանգամ ևս սրբագործելու արեան ու աւերածի խրախճանքը...

Դեռ թո՞յլ է, տարաբախտաբար, այդ գարշանքների դէմ բողոքող ոյժը, բայց այնուամենայնիւ նա ընդունակ է երբեմն հասցնել շանթող հարուածներ, որոնք համատարած ռէակցիայի ու յուսահատութեան մէջ փոքրիկ սփոփանք են ճնշուած, հալածական ժողովուրդների համար։ Այդ ոյժը սոցիալիզմն է։ Նա է միայն, որ ժամուլի մէջ ու պարլամենտներում, արհամարհելով դիւանագիտական կեղծ ու պատիր նկատումները, մերկացնում է դեսպոտների արարքները, որակում է նրանց իրենց պատշաճ տիտղոսներով և կապիտալիստական աշխարհի գարշանիւթ քաօսի մէջ՝ բարձրաձայն հռչակում է Իրաւունքի ու Ազատութեան անսասան պատգամները։ Բրիտանական պարլամենտում՝ աշխատաւորական կուսակցութեան պարագլուխ Օգրէդին էր, որ տիրող մեղկ ու մահացնող մթնոլորտում արտասանեց իր կորովի ճառը Էդուարդ թագաւորի Ռուսաստան անելիք ուղևորութեան դէմ։ Ֆրանսիական պարլամենտում Վայեանն էր, որ առիթ վերցնելով Փալիէրի ուղևորութիւնը դէպի Ռուսաստան՝ հնչեցրեց մի սքանչելի, վաղուց չը լսուած մեղադրական՝ ցարի ու նրա կառավարութեան դէմ։ Նախագա-

հի անընդհատ ազդարարութիւնների ու ստրուկ մեծամասնութեան գոռում-գոչումների մէջ, սոցիալիստական ֆրակցիան յանձին Վայեանի, մի մեծ ու բովանդակալի ճառով անարգ սիւնին բևեռեց Պետերբուրգի երդմնազանց և ուխտադրուժ բռնաւորին, նշաւակեց նրա գործերը սկզբից մինչև վերջ, անուանեց ցարին „մարդասպան", իր լաւագոյն քաղաքացիների դահիճ...

„Մարդասպա՞ն"—հնչեցին ուրիշ ձայներ սոցիալիստական աթոռներից. բառը փոթորիկ յարուցեց, ինչպէս և սպասելի էր այսօր բուրժուազական մամուլը ևս կատաղութեան շանթեր է թափում այդ ահագին սկանդալի առթիւ. մինչև օրս միայն Եըլդըզի տէրն է արժանացել պարլամենտներում այդ որակումին. Այդպիսով ցարը այսուհետև պաշտօնապէս ևս եղբայրացաւ Աբդիւլ-Համիդին։

ՎԱՆԻ ԴԷՊՔԵՐԸ

«ԴՐՕՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(Հալորդած Անգլիոյ, Ֆրանսայի, Իտալիոյ Ակտ. Դորձոց Նախարարներուն և Եւրոպական մամուլին)

Հակառակ թիւրք կառավարութեան ապահովութիւններուն, տաճիկ զօրքերը Վանի նահանգին մէջ աւերակ կընեն, պատրուակ բռնելով ժողովուրդի զինաթափումը, ինչպէս նաև հաւատացնելու համար Եւրոպային թէ ապատամբութիւն կայ։ Իշխանութիւնները կատղած՝ կաշխատին, ամէն գնով, զէնք գտնել մէն մի գիւղի մէջ։ Անլսուր տանջանքներ գործ կը դնեն Թահիր փաշայի տղուն ճէվդէթ պէյի հրամանին տակ։ Զինուորները տասը օր շարունակ բռնաբարումներ կատարած են Խաչէնի գիւղացիներուն վրայ։ Շատ մը աղջիկներ բռնաբարուած, հոգեւարք վիճակի մէջ են։ Եօթը մարդ և երկու կին ծեծի տակ մեռած են, յիսունէն աւելի կիներ նեղած։ Որովհետև կառավարութիւնը, սպառնալիքի տակ, անպատճառ զէնք կը պահանջէ, գիւղացիները վայրագ տանջանքներէ ազատելու համար զէնք կը դնեն և կը յանձնեն իշխանութեանց։ Անձնասպանութեան շատ մը դէպքեր պատահած են։ Ժողովուրդը ահաբեկ և ահռելի վիճակի մէջ, ճամբայ կը փնտռէ խմբովին գաղթելու։

Կառկառի ժողովուրդը, յուսահատութեան մղած, եղած խժդժութիւններուն զէնքով կը պատասխանէ, որով տեղի ունեցած են արիւնահեղ ընդհարումներ։

*

Յունիսի 7-ին Պէկլի, Ուսոս, Մէճիդ, Վէզիր քիւրդերը սպաննեցին Մուշի Աղբրիկ վանքէն, Զաքարիա վարդապետը և վանահայրը Աւդարեան, վիրաւորեցին շատ մը հովիւներ և թալանեցին վանքը։ Իր նախորդը, Ղազար վարդապետը նոյնպէս սպանուած է 1900-ին, և անոր հեղինակները անպատիժ մնացին ինչպէս այսօր։ Վերջերս երեք վաշտ զօրք հասաւ Մուշ՝ հայ գիւղերուն դէմ դործելու համար, նախօրօք պատրաստուած ծրագրի մը համաձայն։

ԿՌԻՒ ԿԱՌԿԱՌՈՒՄ

Կառկառի մէջ արիւնահեղ կռիւներ կան հայերուն և զօրքերուն միջև, Վանէն և Բաղէշէն գիշեր-ցերեկ զօրքեր կը գնան։ Լուր կը պտտի թէ մի վաշտ զօրք ոչնչացուցած են, կռիւը շատ տաք բնոյթ ունի։ Մանրամասնութիւններ կը պակսին։

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԷՆ

Թիւրք իշխանութիւնները աւարտեցին հայերու տուներու խուզարկումը։ Բռնած են 260 հրացան, 207 քիլօ ուժանակ. 30,000ի չափ փամփուշտ և ձերբակալած են 100 մարդ, իբր յեղափոխական։ Անգլ. Ֆրանս. և Ռուս. դեսպանները դիմում ընելով Դրան, և յայտնելով որ այլևս Վանի թիւրք ժողովուրդը ապահով է, պահանջեցին որպէս զի Դուռը միջոցներ ձեռք առնէ ձերբակալելու կոտորածի հեղինակները և առջևը առնէ քրդերու կողմէն որևէ յարձակումի հայերու դէմ, քանի որ անոնք այլևս զինաթափ եղած են։

ՎԱՆ, 25 մայիս

Խուզարկութիւններու սարսափներու հովերը գաւառները ևս տարածուեցաւ։ Արջակի մէջ երևան եկած էր դաւաճան մը որ միւդիւրի մօտ երթալով կանչեր էր տեղացիներ և յայտներ որ իզուր չընդդիմանան, ինքը զէնքի տէրերը կը ճանչնայ, թող բերեն զէնքեր տան որ իրենք ազատ թողուն և չը տանջուին. հակառակ պարագային պիտի զղջան։ Հէնց նոյն օրը քսանի չափ հրացան և մէկ քանի հազար փամփուշտ կը յանձնեն և բոլորն ալ ազատ կը ձգուին։ Նոյն շրջանի մէջ նոյնը պատահած է նաև քանի մը ուրիշ տեղեր։

Մայիսի 15-ին դեռ շուկան փակ կը մնար։ Մօտ 25 աղաներ վալիին և ֆէրիգին քով կանչուեցան։ Ասոնք յայտներ էին թէ խիստ խուզարկութիւն պիտի ըլլայ, ուստի „լաւ է առանց զլմաղալի, որմէ կրնան անմեղներն ալ տուժել, յեղափոխականներու մնացած զէնքերը ևս յանձնուին, տեղացի քաղ. յանցաւորները գան իրենց զէնքերով կը ներուին, իսկ դրսեցիները կամ պիտի յանձնէք կամ մենք ամէն ջանք գործադրելով զանոնք կամ կոչնչացնենք կամ կը բռնենք"։ Նոյն բովանդակութեամբ պաշտօնական գրութիւն մ'էին ցրուած և պատերը փակցուցած։ Ահա թարգմանութիւնը այդ պաշտօնական յայտարարութեան։

„Վանայ մէջ վերջերս ձեռք բերուած շատ մը զէնքերու, ռազմամթերքներու և պայթուցիկ նիւթերու նման շօշափելի բաներով իրենց գոյութիւնն ապացուցուած ու հաստատուած և տեղական խաղաղութիւնը խանգարող ու ժողովուրդի հանգիստն ու անդորրութիւնը վրդովելու պատճառ ուող, անպատշաճ վարմունքներու մէջ քանիցս գործնականապէս գտնուած հայ յեղափոխականներու գործակիցներն իրենց քովը գտնուած զէնքերով ու տեսակ-տեսակ գործիքներով միասին, թող անմիջապէս գան կառավարութեան յանձնուին. հակառակ պարագային խուզարկութիւններ պիտի կատարուին և յիշեալ զէնքերն ու ռազմամթերքներն ձեռք պիտի բերուին և յանցաւորներ ու զանոնք պահպանողներն պիտի հետապնդուին և իրենց մասին օրէնքի տրամադրութիւնը պիտի գործադրուի կը յայտնենք որ որոշուած է վերջնականապէս վերջ տալ երկրի ու ժողովրդի անդորրութիւնը վրդովող իրաց այս վիճա-

կին և անկեղծօրէն կազդարարենք որ հաւատարիմ և հնազանդ ժողովուրդը փութայ ըստ այնմ վարուել"։

Մայիս 2 | 15 1908

Վանայ վալիՕ

324

Այդ օրը մինչև երեկոյեան դեռ ժողովուրդի մէջ ըէակցիան և մութ ուժերն այնքան բարձրագոչ չէին։ Յաջորդ օրը աղաները որոշեցին կառավարութեան յայտնել որ յեղափոխականներու ունեցած զէնքերու մասին ոչ գիտեն, ոչ գաղափար ունեն, փնտռէ և գտիր ըսած էին։

Երեկոյեան արև մտնելուն 2 ժամ առաջ յանկարծ սկսուեց զօրաց շարժում մը դէպի Այգեստան և Այգեստանի հիւս. սարալանջը, գլխաւոր փողոցի քանի մը կարևոր դիրքերը, արևելքէն դաշտը և հիւսիսէն Այգեստանի վերջին գծերը բռնուեցան։ Մայիս 16-ին մինչև երեկոյ կառավարութիւնը շարունակեց զօրաց դասաւորումը այդ մասերուն մէջ։ Այգեստանի հարաւ արևելեան կողմը եղած զօրանոց տարուեցաւ 4 թնդանօթ, հիւսիսային սարալանջ 3, արևելեան դաշտի մէջ փոսեր փորուեցան ու ամբողջ գծով շղթայ պահակ դրին ու 6—7 վրան տնկեցին։ Հաւանաբար այսօր կամ վաղ ներսերն և կարևոր դիրքեր զօրք դնեն։

Եւ ահա աղաներու կողմէն 3 հոգի կրկին կուսակալի մօտ կերթան ամնիստիա ուզելու և կասկածելիներու ցուցակը, կուսակալը կը յայտնէ որ, „իրենց զէնքերով եթէ գան, ոչ քրէական յանցագործներուն ամնիստիա կայ։ Եւ եթէ նոյնիսկ, աւելացուցած է, մէկ քանի հազար զօրք կոտորուին զէնքեր ու յեղափոխականներ պիտի բռնուեն"։

Վերէն խիստ հրաման եկած է ամէն զոհողութիւնով, հետապնդել յեղափոխականները, սակայն միայն կառավարութեան միջոցով, ոչ թիւրք խուժանի, որուն յայտարարուած է որ եթէ խառնուի կամ հայկական սահմաններուն մօտենայ կը գնդակահարուի։ Ժողովուրդը փակուած՝ շուկայ չերթար, եթէ քանի մը օր ևս շարունակուի, անտեսական տագնապը ամենասուր և վտանգալից կերպարանք կստանայ։

Կառավարութիւնը իր պաշարումները սաստկացնելով ժողովուրդը ահաբեկումի և յետազդեցութեան ենթարկեց։ Մութ ուժերը եռ ու զեռի մէջ էին, մատնիչներ, լրտեսներ կը վխտային վստահ ըլլալով իրենց անպատիժ մնալուն։ Ասոնք խմբերով կը մտնէին տուներ և մարդ եղած պարագային կառավարութեան կը յանձնէին։ Խումբ մը ապաստանած էին աղբիւրի մը մօտ նեղ պահարանի մը մէջ։ Մայիս 19-ին առաւօտեան խուզարկութիւնները սկսան, որ մինչև կէսօր հետևանք չունեցաւ։ Զօրքերը արդէն շրջապատել էին պահարանի շրջանը և կողմնակի ցուցմունքներով գտան պահարանի մուտքը, ուրկէ մարդ մտցնելով իմացան թէ մարդիկ կային ներսը։ Հորին մէջ եղողները կը վճռեն յանձնուել անդիմադիր։ Ընդամէնը 19 հոգի։ Բոլորն ալ կապուելով քաղաքի զօրանոցը տարուեցան, ուր ծեծի և բանտարկութեան կենթարկեն, լուր կար թէ մէկը ծեծի տակ մեռեր է. բայց յետոյ հերքուեցաւ։

Ամսոյս 20-ին զինկզակ խուզարկութիւններ սկսան, տարին 3—4 տեղերէ անհատական զէնքեր, բացած են 3 պահարան որոնցմէ բաւականին մթերք գտած են կրսեն դէս ու դէն ձերբակալութիւններ եղան։ Յաջորդ օրը բռներ էին մօտ 21 հոգի, խեղճուկրակ մարդիկ և երեք, իբր թէ, կազմակերպական ձի։ Ապա դարձեալ իրենց ունեցած ցուցակով զանազան անհատներէ պահանջեցին զէնքեր, մէկը յանձնեց և ազատ թողուեցաւ։

Մայիս 23-ին կէսօրէն 2 ժամ յետոյ հրացաններու որոտի ձայն լսուեցաւ։ Զինուորները պատահմամբ տուն մը կը խուզարկեն, ուր գտնուող քանի մը ընկերներ, չուզելով անձնատուր ըլլալ՝ ձիաւոր զօրք մը զարնելով, պաշարող շղթան կը կտրեն կանցնեն և կազատին անվնաս, ապուշ ձգելով զօրքերը, որոնք ճարահատ, բուռն կրակ կը տեղան ետևնուն, թէև աննպատակ։ Նոյն գիշերը քանի մը տուներ կը կողոպտեն, մէկ տան մէջ կսպաննեն 3 անմեղ մարդ, ուրիշ խուլ թաղերու մէջ պահակները մթնելուն կը կողոպտեն, կը ծեծեն և այլն։ Առաւօտն ևս բաւական անցնող դարձող կը կողոպտեն և ապա կսկսեն խուզարկութեան որ ոչ մէկ արդիւնք չը տար։

Ժողովուրդը կը խռնուէր հիւպատոսներու թաղերու մէջ։ Կառավարութիւնը երէկ կանչեց կրկին հայ աղաները, պահանջեց յանձնել Կոմսը և Սարգիսը կամ վտարել և եկեղեցիներուն մէջ յայտարարել. առաջնորդը քարոզ պիտի խօսի այս մասին։ Սաստիկ սով է։

Մայիս 24-ին եղան կարգ մը ձերբակութիւններ, այնպէս որ 8 օրւայ մէջ 50—60 հոգիի հասաւ ձերբակալեածներու թիւը։

ՏԷՐՍԻՄԸ ԱՊՍՏԱՄԸ

Յունիս 20

Անշուշտ ցարդ իմացած կըլլաք Տէրսիմի քիւրդերու կողմէ Զմշկածագի գրաւումը, և 4 գիւղերու թալանումը, Պէյրէթիլ Վասկան, Վանք և Պարասոր. վերջինս զինուած դիմադրութիւն ցոյց տուած է բայց 84 հոգի զոհ տալէ յետոյ անձնատուր կըլլար։ Այս քաղաքը. 95—96-ի դէպքերուն մեծ պատուհասը եղած էր հայերուն։

Երկու քիւրդ աշիրէթներ խոչուշաղցիք և շամուշաղցիք, բաղկացած 800 հոգիէ, յունիս 6-ին յարձակելով Զմշկածագի վրայ, 24 ժամւայ կուռ մը յետոյ կիրակի առաւօտ (յունիս 7) գրաւած են զօրանոցը, մէջը գտնուած 10 զինուորներէն 6-ը սպաննուած և 4-ը փախած են իսկ քաղաքի պաշտպանութեան համար գտնուած 400 զօրքերն 24 ժամւայ ընդդիմութենէ յետոյ չը կարողանալով դիմանալ քիւրդերու գրոհին՝ փախչելով՝ քաղաքը քիւրդերուն յանձնած են։

Շրջակայ թիւրք գիւղերը ահուդողի մէջ են. քիւրդերը կանխաւ կտրած ըլլալով հեռագրաթելերը, հաղիւ կրցած են երկու զաբթիէ ղրկել Խարբերդ օգնութիւն խնդրելու համար։ Թիւրք գիւղացիները կը կարծեն թէ հայ ֆէդայիներ ալ կան քիւրդերուն մէջ որ հայերուն չեն վնասեր։

*

Վայրին մօտիկ մեր ուրիշ մէկ թղթակիցը մայիսի սկզբները՝ ի միջի այլոց կը գրէր.

„Տէրնիմի մէկ քանի ցեղապետներ կառավարութեան հետ բաւական գժտուած են. բայց իրենց բնական անմիաբանութիւնը, մեծ յոյս չի ներշնչեր...“

*

ՍԵԻ ԾՈՎ, յուլիս 2

Զրոյց կը շրջի թէ Տէրսիմի քիւրդերը Ակն արշաւեր և Թիւրքերու մեծ վնաս հասցուցեր են ջարդ և կողոպուտ ընելով։ Կառավարութիւնը Սեբաստիոյ, Թօգատի և Զիլէի ըէդիֆները և գուրայի (նոր քէէով ընտրուած) զինուորները կը հաւաքէ Տէրսիմի քիւրդերուն ապստամբութիւնը զսպելու համար։

*

Պոլսէն կը հեռագրեն Ֆրանսական „Թան“ լրագրին։

Վարչական միջոցներու հետևանքով՝ որոնց չեն ուզեր հպատակիլ, որովհետև զանոնք նեղացուցիչ կը գտնեն, Տէրսիմի-քիւրդերը, մինչև ցարդ հանդարտ, ապստամբած են և միացած խռովարար ցեղերուն։

Կառավարութիւնը որոշեց՝ քսան վաշտ հետևակ զօրք շարժման մէջ դնել կարգը վերահաստատելու համար։

ՍՕՑԻԱԼԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍԿԶԲՈՒՆՔ ԵՒ ՏԱԿՏԻԿԱ

—

Որոշ „սկզբունքներ“, կամ ֆօրմուլաներ, թափով ու շռինդով յայտարարուած սօցիալիստական շարժման արշալոյսին՝ չը կարողացան անխախտ պահպանել իրենց կուսակցական մաքրութիւնը“ շարժման հեռաւոր դրուագներում։ Կեանքը գալիս էր տրորելու նրանց իր անողոք տրամաբանութեամբ, իր աննախատեսելի բարդութիւններով, իր կնճռոտ անակնկալներով։

Այդպիսի մի ճակատագիր ունեցաւ և յայտնի ֆօրմուլան՝

— Պրօլետարական կուսակցութիւնը միշտ պիտի բռնէ յեղափոխական-դիմադրական դիրք՝ բոլոր բուրժուական կառավարութիւնների հանդէպ։

Դա նման է միւս ֆօրմուլային, որ մենք շօշափեցինք նախորդ յօդուածում՝

—Պրօլետարական (սօցիալիստական) կուսակցութիւնը չը պէտք է իրաւախոհէ բուրժուական կուսակցութիւնների հետ, չը պէտք է դիմէ կոմպրոմիսների, այլ պիտի մնայ իր ընթացքի մէջ կատարելապէս, բացարձակապէս անկախ։

Երկու հռչակուած ֆօրմուլաներն էլ, կարելի է ասել հալեցին սօցիալիստական գործելակերպի այրող ու ցաւոտ մտահոգութիւնների մէջ։ Դիւրին էր յարգել այդ ֆօրմուլաները շարժման սկզբներում երբ կուսակցութիւնը մի չնչին փոքրամանութիւն էր, երբ սօցիալիզմի համաշխարհային բանակը դեռ նոր էր միային սաղմնաւորում, երբ անհրաժեշտ էր կղզիանալ մի տեսակ „վեհապանծ առանձնութեան“ մէջ, տոգորուել անհաշտ ըմբոստութեամբ և թափահարել կարմիր դրօշակը տիեզերական բէակցիայի դէմ, վառել, հրահրել մասսաներին՝ նոր ու ցնցող պատգամներով...

Բայց այդ կարմիր ըմբոստութիւնը միշտ աւելի և աւելի նւազեց, այդ անհաշտ „բէվոլիւցիօնիզմը“ միշտ աւելի մեղմացաւ, երբ սօցիալիզմը իր յարաճուն այիքներով հեղեղեց քաղաքակիրթ երկրները, դարձաւ կեանքի, էվոլիւցիայի մի պատկառելի գործօն, երբ սօցիալիստ կուսակցութիւնները, պարլամենտարիզմի օրինականութեան դրօշակի տակ սկսեցին միջամտել քաղաքական ու սօցիալական դրամաներին, ձգտելով ոչ միայն տարածել, ժողովրդականացնել իրենց տեսական վարդապետութիւնը, այլ և, ըստ Լիբկնեխտի արտայայտութեան, „որևէ բան անել գործնական հողի վրայ *“...

Եւ ինչպէս որ սօցիալիստները, որոշ բէֆօրմների ակնկալութեամբ և բազմաթիւ այլ պարագաներում, վճռեցին մօտենալ, իրաւախոհել բուրժուական առաւելապէս ռամկավար, ձախակողմեան ֆրակցիաների հետ,—նոյն տրամաբանութեամբ նրանք սկսեցին թև տալ, պաշտպանել այս կամ այն բուրժուազական կառավարութիւնը, որ կոչուած ունի իրականացնել ռամկավարական բէֆօրմների մի յայտնի ծրագիր, կամ թէ մաքառել կղերա-կայսերական մութ ուժերի բէակցիայի դէմ։

Եւ յեղափոխական, կարմիր ֆրազայի բռնաբարումը—եթէ կարելի է իրաք ու տեսականօրէն յեղափոխական անուանել վերոյիշեալ ֆօրմուլաները—այդ բռնաբարումը կատարուեց մի առանձին համարձակութեամբ հէնց այն երկրում, ուր մշտապէս վառ են մնում յեղափոխութեան աւանդութիւնները և ուր առաջին անգամը սաղմնաւորել է գործնական-յեղափոխական սօցիալիզմը. — Ֆրանսիայում... Դրէյֆուսեան տագնապի ժամանակ, Վալդէկ-Բուսսոյի, ապա և Կօմբի մինիստրութեան օրով։ Կեանքն առաջ էր գնացել և պահանջում էր հրամայականօրէն սօցիալիստներից՝ ոչ միայն մօտենալ, ժամանակաւոր դաշն կապել բուրժուազական ձախակողմեան հատուածների հետ, այլ և պաշտպանել սիստեմատիկաբար, նոյնիսկ ամբողջ տարիների ընթացքում, մի բուրժուա կառավարութիւն։ Կեանքի լոգիկան դօգմաներից, հաւատամքներից աւելի զօրաւոր էր և նա ստիպում էր վերաքննել, բէվիզիօնի ենթարկել տեսական որոշ արժէքներ։

Այդ „բէվիզիօնիզմը“ քարոզւում էր արդէն թէօրիական հողի վրայ—Գերմանիայում։ Նրա պաշտպանն ու հիմնաւորողն էր Էդ. Բերնշտայն, մարքսիզմի ամենատաղանդաւոր և ամենաշիտակ առաջամարտիկներից մինը, Մարքսի ու Էնդելսի երկարամեայ ու անմիջական աշակերտը։ Նա եկել էր դուրս քշելու միանգամ ընդ միշտ սօցիալիստական աշխարհհայեացքից ու տակտիկայից բոլոր „կարմիր պատրանքները“ իլլիւզիաները, բոլոր մնացորդները հին մարքսիզմի, որոնք խօսում են Zusammenbruch-ների, կատաստրոֆների, բռնի արիւնահեղ յեղաշրջումների մասին։ Նա հերքեց գիտականօրէն մարքսիզմի գիտականութիւնը“, մահացու հարուած տուեց մարքսիստական դօգմային, որ իր ամուր, միանգամ ընդ միշտ բիւրեղացած մաքսիմներով անսխալականութեան հովեր էր առել և յաւակնում էր ղեկավարել, ուղղութիւն տալ նոյն անփոփոխ հրահանգներով բոլոր երկրների ու ազգերի աշխատաւորական շարժումներին։ Իր այդ բացասական քննական աշխատանքով Բերնշտայն կատարեց պատմական մեծ անգնահատելի գործ, բայց երբ խնդիրը եկաւ դրականին, երբ նա ձևակերպեց սօցիալիստական տակտիկան—„ձգտել նպատակին խաղաղ ճանապարհով, բէֆօրմներով, հաստատութիւնների ու բարքերի աստիճանական ռամկավարացումով, ձեռք-ձեռքի տուած բոլոր դէմօկրատ, թէկուզ և բուրժուա տարրերի հետ“—երբ նա ձևակերպեց զուտ բարենորոգչական, բէֆորմիստական այդ ուղղութիւնը՝ ընկաւ արատաւոր մի ծայրայեղութեան մէջ, գրեթէ մոռացաւ սօցիալիզմի վերջնական նպատակը և յափշտակուած դէմօկրատիայի, ռամկավարութեան առաջադիմութեամբ՝ ձուլեց սօցիալիզմը դէմօկրատիզմի հետ, աշխատաւոր դասակարգը՝ միւս դասակարգերի հետ։ Այդ տպաւորութիւն էր թողնում Բերնշտայնի նշանաւոր գրուածքի ** ընթերցանութիւնը, թէև, չը պէտք է մոռանանք, նա շարունակեց սօցիալիստ մնալ, նոյն իսկ մարքսիստ անուանել իրեն և մի քանի տարուց իվեր նստած է Բայխստագում, սօցիալ-դէմօկրատիայի ֆրակցիայի մէջ, դաւանում է միւսների պէս նոյն համոզմունքը՝ որ

* Լիբկնեխտի խօսքը 1897-ի Համբուրգի Պարտայտագում. տես „Դրօշակի“ նախընթաց յօդուածը՝ „Հակասական թռիչքներ Մարքսիզմի էվոլիւցիայի մէջ“։

** *Die Voraussetzungen des Sozialismus und die Aufgaben der Sozialdemokratie.*

կուսակցութիւնը պիտի կանգնած մնայ դասակարգային կռուի հողի վրայ, որ նա պիտի ձգտէ իր ձեռքը գրաւելու քաղաքական իշխանութիւնը և համայնացնելու արդիւնադործութեան բոլոր միջոցները։

Դրեզդէնի պարտայայտագը (գերման. սոցիալ-դէմոկրատիայի տարեկան համաժողովը) ամենախիստ ոճով դատապարտեց բէվիզիոնիստական նոր գաղափարներն ու տակտիկան և ձայների ճնշող մեծամասնութեամբ „փրկեց“ մարքսիստական սրբութիւն-սրբոց հաւատամքն ու յեղափոխական „տակտիկան“։

Բայց Դրեզդէնի պարտայայտագը (գումարուած 1903 թ. աշնան) ուղղեց իր շանթերը ոչ միայն Բերնշտայնի ու նրա քարոզների դէմ, այլ և ֆրանսիական սոցիալիստ կուսակցութեան դէմ, որ Ժօրէսի առաջնորդութեամբ, ձեռք-ձեռքի տուած արմատական ու դէմոկրատ կուսակցութիւնների հետ՝ մղում էր տարիներից իվեր փայլուն կռիւներ հայրենի բէակցիայի դէմ, յանուն արդարութեան ու հանրապետական ազատութիւնների։ Բերնշտայնը կամաց-կամաց մոռացուց և Ժօրէսը դարձաւ փոթորկոտ վիճաբանութիւնների ու անվերջ յարձակումների առարկան։ Ամստերդամի միջազգային սոցիալիստական կոնգրէսում (1894 թ.) կռիւը Ժօրէսիզմի դէմ օրակարգի կենտրոնական խնդիրն էր։ Բէբէլ և Գեդ, իբրև հին, յեղափոխական մարքսիզմի ջերմեռանդ աւանդապահներ, բազմաթիւ նիզակներ ջարդեցին այդ առթիւ, յայտարարեցին, որ Ժօրէսը շեղւում է սոցիալիստական "հին փառահեղ տակտիկայից", մթնացնում է աշխատաւորների դասակարգային ինքնագիտակցութիւնը, մոռացնում է դասակարգերը, վտանգում է սոցիալիզմը և այլն։ Կաուցկին մինչև իսկ բանադրանքի ենթարկեց Ժօրէսին, իր օրգանի մէջ բարձրաձայն թելադրեց՝ արտաքսել կուսակցութիւնից հռչակաւոր սոցիալիստին և ապահովել շարժման ընթացքը։ Պլեխանովների ամբողջ երամը ձայնակցեց ուղղափառութեան մեծ Ռաբբիին... Դա ամենամութ, ամենատխրալի դրւագներից մէկն է միջազգային սոցիալիստական շարժման։

Ցեսնենք, թէ որքան մեղանչում էր սոցիալիզմի դէմ Ժօրէսի կուսակցութիւնը և թէ որքան հետևողական էին Գեդ ու Բեբելները իրենց անհաշտ բէվոլիւցիոնարիզմի մէջ։ Հարկաւոր է փոքր ինչ կանգ առնել այդ պատմութեան վրայ. այստեղ թագնուած է գաղափարների, հակացողութիւնների մեծ շփոթութիւն և նրա վերլուծումը թերևս կը տայ մեզ ճշգրիտ ըմբռնումն՝ սոցիալիստական բուն սկզբունքների ու տակտիկայի։

Ի՞նչ մեղադրանքներ էին բարդւում Ժօրէսի ու իր կուսակցութեան վրայ։ Դրեյֆուսեան դատը, ինչպէս յայտնի է, երկու հակամարտ հատուածների էր բաժանել ոչ միայն ամբողջ ֆրանսիական ազգը, այլև սոցիալիստ կուսակցութիւնը։ Մի կողմը Ժօրէսն էր, որ իր հետ ունենալով ձեռքի ու մտքի աշխատաւորութեան մեծամասնութիւնը, նետուեց կռիւի մէջ. միւս կողմը Գեդն էր իր համախոհներով, որ քարոզում էր ձեռնպահ մնալ, անտարբեր հանդիսատես՝ „բուրժուաների կռիւի հանդէպ“։ Երկու թեւերի հակառակութիւնը առանձնապէս սաստկացաւ Միլրանի մինիստր դառնալու օրից իվեր։ Մի մեծ անակնկալ, սկզբունքի ու տակտիկայի մի մեծ, ահաւոր խնդիր էր ծագում միջազգային սոցիալիզմի առջև։ Սոցիալիստը կարո՞ղ է մինիստր դառնալ, թէ ոչ։ Ոմանք համարում էին սկզբունքի հարց, ուրիշները՝ տակտիկայի։ Ժօրէսը պաշտպանում էր Միլրանին։ Գեդի կուսակցութիւնը դատապարտում էր սկզբունքով և պահանջում էր միջազգային սոցիալիստական ատեանից միանգամ ընդմիշտ որոշել, որ երբեք ոչ մի պարագայում սոցիալիստը չի կարող մտնել բուրժուական կառավարութեան մէջ, իբրև նրա անդամ։ Խնդիրը դրւեց 1900 թուին Պարիզում գումարուած միջազգային սոցիալիստական կոնգրէսի առջև։ Քէբէարկւեց, անցաւ Կարլ Կաուցկու յայտնի բանաձևը, ուր սոցիալիստի մասնակցութիւնը բուրժուական կառավարութիւններին՝ վճռւում էր բացասական ձևով, թէև խիստ նշանակելի վերապահութեամբ։ Այդ բեզիրվը հետևեալն է.

„... Եթէ որևէ մասնաւոր պարագայում քաղաքական դրութիւնը անհրաժեշտ դարձնէ այդ վտանգաւոր փորձը, դասակարգի հարց է և ոչ սկզբունքի. միջազգային կոնգրէսը չի կարող այդ մասին վճիռ կայացնել“։

Գեդիստները դժգոհ մնացին այդ առաձգական բանաձևից, և ձայն տուին նրա դէմ։ Ժօրէսն ու իրայինները ընդհակառակը քւէարկեցին։ Ժօրէս լքեց Միլրանին, թէև դրւատում էր նրա կատարած բէֆորմիստական որոշ քայլերը, բայց միւս կողմից նա չէր կարող չը խոստովանել այն չարիքները, որ Միլրան հասցրեց բանւորական դատին, մինիստր դառնալով։

Կռիւը չը վերջացաւ, կուսակցութեան ներքին պառակտումը շարունակւեց։ Սկզբունքի և տակտիկայի ուրիշ խնդիրներ հրապարակ եկան։ Ժօրէսի կուսակցութիւնը շարունակում էր եռանդուն կերպով աջակցել հանրապետական մինիստրութիւններին (Վալդեկ-Ռուսսոյի, Կոմբի)՝ թէ բէֆորմային գործունէութեան մէջ և թէ կռւի մէջ՝ ընդդէմ բէակցիայի—կղերականների, նաչիոնալիստների, հակասէմիտների, արքայականների։ Գեդիստները չէին մարսում այդ հանգամանքը, նրանք համարում էին սոցիալիզմի միջամտութիւնը դրեյֆուսեան հարցի մէջ՝ անմտութիւն, նրանք ասում էին, որ կղերի, միլիտարիզմի և նման չարիքների դէմ հարկ չը կայ կռւել ներկայումս, որ նրանք կը չքանան միայն կապիտալիզմի չքանալու հետ. նրանք պնդում էին, որ պրոլետարիատը պիտի կղզիանայ, որ սոցիալիստական կուսակցութիւնը պիտի քայլէ անջատ, միւս բուրժուա կուսակցութիւններից, որ նա պիտի մնայ միշտ և ամեն պարագայում „յեղափոխական ապպոզիցիայի“ մէջ, դիմադրական, անհաշտ դիրքում՝ բուրժուազական բոլոր կառավարութիւնների վերաբերմամբ։

Այստեղ է հակացողութիւնների շփոթը, այստեղ է սկզբունքների ու տակտիկայի կատարեալ խեղաթիւրումը։ Կարմիր ըմբոստութեան, հին, բառամոլ բէվոլիւ-իսնարիզմի դոգմաներն էին, որ խօսում էին Ժիւլ Գեդի բերնով,—դոգմաներ, որ արդէն յաղթահարւած են և այլևս ոչ մի առնչութիւն չունին կեանքի նորագոյն պահանջների հետ, գէթ արևմտեան քաղաքակրթութեան մէջ։ Այդ պարոնները իրենք ամենայն հաւատարմութեամբ աջակցել, պահպանել էին Լէօն Բուրժուայի արմատական մինիստրութիւնը, նրա գոյութեան ամբողջ ընթացքում (1895 թ.—1896)...

Եւ վեճը միանգամ ևս փոխադրւեց միջազգային սոցիատեանի առջև, նա դրւեց Ամստերդամի կոնգրէսին (1904 թ.)։ Գեդը պահանջում էր, որ միջազգային կոնգրէսը նոյն ձևով դատապարտէ, նոյն պարսաւանքն արձակէ Ժօրէսեանների դէմ, որպիսին արձակւած էր Դրեզդէնի պարտայայտագից Բերնշտայնի ու բէվիզիոնիզմի դէմ։ Եւ նա նորէն մերժումն ստացաւ։ Նա դարձեալ սխալւեց իր հաշիւների մէջ։ Ամստերդամի կոնգրէսը չը դատապարտեց Ժօրէսեանների տակտիկան։ Ադլեր-Վանդերվելդեան բանաձևը, որ դիտմամբ դուրս էր նետել սմանց առաջարկած դատապարտումն ու պարսաւանքը, ստացաւ 21 ձայն ընդդէմ 21-ի։ (Այն ժամանակ դեռ քւէարկւում էր ըստ ազգութիւնների)։

Այդ 21 ձայնը ընդդէմ 21-ի միևնոյն ժամանակ հասկացնում էին, որ միջազգային կոնգրէսը այնքան էլ ձեռնհաս չէ դատավճիռ արտասանելու Ֆրանսիայի սոցիալիստական կուսակցութեան դէմ, որը գործում է, ինչպէս թելադրում են իր հայրենիքի առանձնայատուկ պայմանները։

Խնդիրը, սակայն տենդային վիճաբանութիւնների առարկայ եղաւ և գերմանական ուղղափառ, իբր յեղափոխական սոցիալ-դէմոկրատիան, Ժօրէսիզմը ջախջախելու համար այդտեղ ևս, Ամստերդամում, կրկէս նետեց իր լաւագոյն ձին-Աւգուստ Բեբելին, որ քիչ առաջ ջախջախել էր Բերնշտայնիզմը Դրեզդէնում։ Սկզբունքային ու տակտիկական մեծ խնդիրներ յուզեցին այդ փոթորկոտ նիստերի միջոցին։ Բեբէլ իհարկէ, սկզբունքով չէր կարող բողոքել այն փաստի դէմ, որ Ֆրանսիական սոցիալիստները, Ժօրէսեանները, համակերպելով մարդկայնութեան ու ար-

դարութեան իրենց բնազդին և միանգամայն քաղաքական ու կուսակցական մտահոգութիւններին՝ նետուել էին մի փոթորկալի պայքարի մէջ, փրկելու համար միլիտարիզմի ճիրաններից մի անմեղ մարդ։ Ամբողջ աշխարհի սօցիալիստական բոլոր կուսակցութիւնները ծափահարում էին ժամանակին ֆրանսիական ժօրէսիստներին, որոնք մղում էին այդ մեծ պայքարը յանուն Դրէյֆուսի ու արդարութեան, ընդդէմ զինուորական, կղերա-նացիօնալիստական, խաժամուժի, թեթեւ տուած արմատական, դեմօկրատ—հանրապետական կուսակցութիւնների հետ։ Ամբողջ աշխարհը... բացի երկու մարդուց, բացի երկու սօցիալիստներից. մէկը մարքսամոլ Ժիւլ Գեդն էր, որին իր մրցումը Ժօրէսի հետ հասցրել էր ջղայնութեան գագաթնակէտին, միւսը—Վիլհելմ Լիբկնեխտ, որի չափազանց տարօրինակ ընթացքը այդ կարեւոր պատմական վայրկենում մինչև վերջն էլ չը կարողացան բացատրել։ Ցամենայն դէպս, բոլոր երկրների սօցիալիստական կուսակցութիւնը, ի թիւս նրանց և գերմանական սօցիալ-դեմօկրատիան, միաձայն գտնում էին, որ Ժօրէսեանների տակտիկան եղել է միանգամայն համապատասխան սօցիալիզմի ոգուն, որ անհրաժեշտ էր միջամտել պայքարին, նոյնիսկ կոմպրոմիսների գնով դաշն կապել բուրժուազական ձախակողմեան ֆրակցիաների հետ և կռիւ մղել յանուն արդարութեան, որ բռնաբարուած էր յանձին մի անհատի, թէկուզ „բուրժուա“ մի անհատի։

Ուշք դարձրէք. պատմական այդ յիշատակելի փաստով համաշխարհային սօցիալիզմը ցայտուն կերպով և մի անգամ ընդ միշտ սկզբունքով որոշում է սօցիալիստական տակտիկայի մի ընդհանուր ու խոշոր գիծը,—այն՝ որ սօց. կուսակցութիւնը կարող է և պէտք է իհարկէն միանայ բուրժուազական առաջադէմ ֆրակցիաների հետ, որոշ նպատակներ առաջ տանելու, որոշ դատեր պաշտպանելու համար։ Դրանով իսկ ջախջախւում էր Ժիւլ Գեդի և ուրիշ մի կարգ ֆանատիկոսների պաշտպանած թեզիսը՝ թէ „սօցիալիստական կուսակցութիւնը պէտք է միշտ մնայ անջատ, կղզիացած, „յեղափոխական դիրքում...

Բէբէլ չէր կարող պաշտպանել սկզբունքով և միւս առաջարկը (դարձեալ գեդիստների) թէ սօցիալիզմի պարլամենտական ֆրակցիան ամեն պարագայում պիտի մնայ „յեղափոխական“ օպպօզիցիայի մէջ՝ բուրժուազական կառավարութիւնների դիմաց։ Նա չէր կարող այդ պաշտպանել, քանի որ ինքը գերմանական սօցիալ-դեմօկրատիան եւս որոշ պայմաններում պաշտպան է հանդիսացել կառավարութեան և այն էլ կայսերական և կանցլերական կառավարութեան։ 1893—94-ին, երբ Կապրիվիի մինիստրութիւնը բիսմարկեան հովանաւորող սիստեմի քաղաքականութեան տեղ (*Schutzzollpolitik*), մտցրեց առևտրական դաշինքների սիստեմը Գերմանիայի ու հարևան պետութիւնների միջև—մի հանգամանք, որ մեծապէս իջեցրեց մաքսը ապրուստի անհրաժեշտ պիտոյքների վրայ և դրանով իսկ աժանցրեց կեանքը չքաւոր դասակարգերի համար—մի այդպիսի ծանրակշիռ հանգամանքում, երբ այդ համակրելի նորմուծութեան դէմ ապստամբել էր ագրարիանների և բոլոր յետադէմ ուժերի դաշնակցութիւնը՝ գերմանական սօցիալ-դեմօկրատիան եռանդով աջակցում, թև էր տալիս մինիստրութեան...

Եւ այժմ Ամստերդամի համագումարին այդ նոյն սօցեալ-դեմօկրատիայի հեղինակաւոր առաջնորդը եկել էր „անհաշտութեան“ ու „յեղափոխականութեան“ քարոզ կարդում Ֆրանսիայի ժօրէսիստների վրայ... Ի՞նչ էր ասում նա։ Սկզբունքով ու լռելեայն ընդունում էր, որ սօցիալիստները յայտնի մօմենտներում կարող են թև տալ բուրժուազական այս կամ այն մինիստրութեան, բայց, ասում էր, այդ աջակցութիւնը պէտք է լինի վ ա յ ր կ ե ն ա կ ա ն“...

„Կայ մի հիմնական տարբերութիւն մեր և ձեր տակտիկայի մէջ—ասում էր Բէբէլ, դիմելով Ժօրէսի կուսակցութեանը—մենք նայած հանգամանքներին, ազատամիտների հետ ենք, ընդդէմ կաթօլիկ կենտրօնի, կամ այդ վերջինի հետ ենք, ընդդէմ ազատամիտների, բայց միշտ վ ա յ ր կ ե ն ա կ ա ն ձ և ո վ։ Այն ինչ՝ դուք դաշնակցել էք բուրժուական ձախակողմեան ֆրակցիաների հետ՝ մշտական ձեւով...

Մ շ տ ա կ ա ն (*permanent*) ձեւով, ֆրանսիական սօցիալիստները, իհարկէ, չէին էլ մտածել դաշնակցել բուրժուական ձախակողմի հետ, րէֆօրմների մինիստրութիւնը պահպանելու համար։ Բէբէլ գիտէր այդ. նա ուզում էր ասել, որ ժօրէսեանների դաշնակցութիւնը ե ր կ ա ր ժ ա մ ա ն ա կ ո վ է կռում իր դաշնակցութիւնը և շատ է արդէն ս ի ս տ ե մ ա տ ի կ ձ և ո վ աջակցում մինիստրութեան։

Այդ մէկը ճիշտ է. և այդտեղ է սօցիալ-դեմօկրատիական, *quasi*-յեղափոխական պատճառաբանութեան թուլութիւնը։ „Յեղափոխականների“ տրամաբանութեամբ՝ բուրժուազական այս կամ այն ֆրակցիայի հետ կարելի է դաշնակցել, դիցուք մի քանի շաբթով, բայց երբ այդ ժամանակամիջոցը երկարում է—դաշնակցութիւնը դառնում է արդէն մնասակար, հակասօցիալիստական ու պարսաւելի...

Ոչ մի տարակոյս չը կայ, սակայն, որ եթէ Գերմանիայում իշխէին ֆրանսիական պայմանները, եթէ այնտեղ էլ գոյութիւն ունենար ճշմարիտ պարլամենտարիզմ, պատասխանատու մինիստրութիւն եւայլն, եթէ այնտեղից էլ հանդէս գային Կոմբի, Վալդէկ-Ռուսսօի պէս մինիստր նախագահներ, „յեղափոխական“ սօցիալ-դեմօկրատիան նոյնպէս տարիներով կը դաշնակցէր բուրժուազական ձախակողմի հետ՝ կանգուն պահելու համար այդպիսի կառավարութիւններ, որոնք շիտակօրէն ծրագրում են ու կորովի կերպով առաջ են տանում՝ մի ամբողջ շարք բուն ռամկավարական րէֆօրմների։ Նման երևոյթ մենք տեսանք Իտալիայում, Ցանարդելլիի մինիստրութեան օրով, Իտալիայում, ուր քաղաքական սիստեմը նոյնպէս համեմատաբար ռամկավարական է, ուր մինիստրները պատասխանատու են պարլամենտի և ոչ թագաւորի առաջ (ինչպէս Գերմանիայումն է) և ուր մինիստր-նախագահ Ցանարդելլի ծրագրել էր մի շարք հիմնական սօցիալական րէֆօրմներ։ Այնտեղ եւս սօց. կուսակցութիւնը եռանդով աջակցեց րէֆօրմի մինիստրութեան։

Ոչ մի զարմանք՝ որ հանրապետական Ֆրանսիայում ա ւ ե լ ի ե ր կ ա ր տ և ե ց սօցիալիստների դաշնակցութիւնը բուրժուազական ձախակողմեան թևերի հետ։ Դրէյֆուսի գործը մի քանի շաբաթում չէր կարող սպառուել. իսկ այդտեղ արդէն ֆրանսիական սօցիալիստների (ոչ գեդիստների) բռնած դիրքը արժանացաւ համաշխարհային ներբողի։ Ամենքը խոստովանում են, որ սօցիալիստները միացած արմատականների հետ՝ փրկեցին հանրապետութիւնը, որին սպառնում էր իրական վտանգ։ Սակայն այդ կէտում եւս դեմօնստրատիվ տնկւում է ուղղափառ մարքսիստ Ժիւլ Գեդը, ասելով, որ նրա համար միևնոյն է՝ լինի Ֆրանսիայում հանրապետութիւն, թէ Վիլհելմեան մի միապետութիւն... բայց մոլեռանդ ադանդաւորի այդ յայտարարութիւնը եւս լուրջ ուշադրութեան չ'առնւեց ոչ Ամստերդամի կօնգրէսում, ոչ էլ սօցիալիստական միջազգային գրականութեան մէջ։

Դրէյֆուսեան տագնապին հետևեց րէֆօրմների մի կարեւոր շրջան։ Հրապարակ նետուեց „գումարումների“ հռչակաւոր օրէնքը, ուղղուած կղերի հզօր ու համատարած տիրապետութեան դէմ։ Մի մութ ու բռնակալ ուժ, որ զինուած միջնադարեան զէնքերով ու նիւթական ահռելի հարստութեամբ՝ բթացնում էր ամբողջ սերունդներ, իր յետադէմ ու թունաւոր կրթութեամբ ու դաստիարակութեամբ և բացի այդ ամենազօրեղ կուանն էր հանդիսանում բոլոր մութ, հակահանրապետական, դաւադիր ուժերին։ Մի հսկայական կռիւ էր բորբոքուել կղերական և աշխարհիկ ուժերի մէջն, մի կռիւ որ տևեց տարիներ։ Ի՞նչ տակտիկա պիտի ընդունէին սօցիալիստները... բնականաբար, նրանք պէտք է օգնութեան գային այն տարրերին—թէկուզ և բուրժուա—որոնք ուզում էին մի անգամ ընդմիշտ ազատել Ֆրանսիան այդ մութ ուժերից, ջախջախել կղերական հիդրան, սահմանել աշխարհիկ ու դեմօկրատիկ դպրոց ու կրթութիւն։ Այդպէս և վարուեց Ժօրէսի կուսակցութիւնը Ֆրանսիայում, հակառակ միւս „յեղափոխական“ գեդիստներին՝ որոնք կարծում էին, թէ փակելով վանական ա-

մուլ կղզիացման մէջ, սոցիալիստական գործ էին կատարում։ Պայթեց յետոյ մի ուրիշ մեծ ու հրատապ խնդիր— եկեղեցու և պետութեան զատման խնդիրը, որ նոյնպէս պակուեց յաղթանակով, շնորհիւ նոյն սոցիալիստական գործակցութեան։

Ահաւասիկ սկզբունքի կամ կուզէք տակտիկայի ծանրակշիռ հարցեր, որոնք ծեծուեցին Ամստերդամի պատմական վիճաբանութիւնների ընթացքում, որ դժբախտաբար այսպէս անուանուած „անհաշտները“ „յեղափոխականները“ ցոյց չէր տուին ցանկալի չափով անկեղծութիւն։ Նրանց ներբողածը բառամոլ ռէվոլիւցիոնարիզմն է, թէև իրականութեան մէջ նրանք ընդունակ են նոյն „օպպորտիւնիստ“ քայլերն անելու, որ նրանք բարդում էին իբրև մեղադրանք իրենց հակառակորդների վրայ։ Քանի՞ դէպքերում այդ նոյն գետիսները այդ նոյն գերմանական սոցիալ-դէմօկրատիան լողացել էին օպպորտիւնիզմի ջրերի վրայ։ Փոլլըմար, որ իր համախոհներով քէէարկել էր անգամ բիւջէն բաւարական լանդտագի մէջ՝ մնում է Բէբէլների ու Կաուցկիների շարքերում նոյն յարգուած ու պատկառելի ուժը։ Բադէնի լանդտագի երկու սոցիալիստ անդամները, որոնք մասնակցել էին Մեծ Իշխանի թաղման հանդէսին,—մնում են նոյն շարքերում... Իսկ Կաուցկին հրահանգում էր դուրս վռնտել ֆրանսիական սոցիալիստական կուսակցութիւնից... Ժորէսին։

Այո, բառամոլ „յեղափոխականութիւն“։ Իրօք բոլորն էլ „օպպորտիւնիստ“ են, եթէ հասկանաք այդ բառի տակ կամայ միտերի, իրաւախոհութեան քաղաքականութիւնը։ Գերմանական սոցիալ-դէմօկրատիան, որ մի ժամանակ յանձին իր կատաղի „կարմիրների“ դատափետում էր ամէն մասնակցութիւն սոցիալիստների կողմից պրուսական լանդտագի ընտրութիւններին, այսօր մասնակցում է ամենայն եռանդով այդ ընտրութիւններին, և յաղթական ծափ է զարկում, որ եօթ հոգի սոցիալ-դէմօկրատներ կարողացան ներս թափանցել առաջին անգամը իւնկերական ռէակցիայի այդ միջնաբերդը... Եւ բազմաթիւ նման օրինակներ։

Այդպիսով առաջ է գալիս ըմբռնումների մի կատարեալ շփոթութիւն։ Որտեղ է վերջանում բուն „յեղափոխական անհաշտութիւնը“ և որտեղ է սկսւում թուլամորթ „օպպորտիւնիզմը“։ Որ է առհասարակ Գեդի պաշտպանած „յեղափոխական սիստեմատիկ օպպոզիցիան“։ Նա մի կատարեալ առասպել է ուտոպիական և ուբրօնիական։ Ոչ ոք չի կիրառում այն, ոչ իսկ գեդիստները։ Բուն սոցիալիստական խելացի տակտիկան դարձեալ կայանում է ոչ վանական մեկուսացման մէջ, ոչ անպտուղ ու մեղկ ձեռնպահութեան մէջ, այլ գործօն միջամտութիւնների ու յարատև կռիւի մէջ,—կռիւ այն բոլոր պատնէշների ու պատուհանների դէմ, որոնք թու

կանգնում համաշխարհային պրոգրէսի ու սոցիալիզմի յաղթական առաջխաղացութեան դէմ։ Այդ կռիւի մէջ սոցիալիստական կուսակցութիւնը մի վայրկեան անգամ չը պէտք է մոռանայ իր վախճանական իդեալները և դասակարգային տեսակէտը։ Նա մի վայրկեան անգամ չը պէտք ձուլուի ուրիշ կուսակցութիւնների հետ, այլ իհարկին ձեռք տալով նրանց պիտի պահպանէ յար և միշտ իր ավտոնոմ, առանձնայատուկ կերպարանքը։ Եւ այդ ան հրաժեշտ պահանջը շեշտում էր Ժորէս Ամստերդամի իր ճառի մէջ.

„Մենք կրկնում ենք անդադար, որ անհրաժեշտ է, որ պրոլետարեատը լինի դասակարգային կուսակցութիւն, մի կուսակցութիւն, որ ինքնօրէն է, որ աւտոնոմ է իր նպատակով, իր կազմակերպութեամբ, իր միջոցներով։ Աւտոնոմ իր կազմակերպութեամբ՝ քանի որ այն ռէֆորմներից դէնը, որոնք կարող են մեղմել կապիտալիստական հասարակութեան պատուհանները, նա հետամտում է մասնաւոր սեփականութեան լիակատար վերացման և համայնականի հաստատութեան։ Նա ձգտում է արմատից պոկել կապիտալիզմի բոլոր ձևերը, ռէնտա, վարձ, շահ և այլն վերադարձնել աշխատանքի բոլոր արդիւնքները կազմակերպուած աշխատաւորների հաւաքական ամբողջութեանը։ Եւ իր նպատակին հասնելու համար, սեփականութեան յեղաշրջման համար՝ նա ուզում է, որ իւրաքանչիւր ռէֆորմ ոչ միայն թեթևացնէ տառապանքները, այլ և աճեցնէ պրոլետարիատի մտքի ու գործողութեան կորովը, էներգիան... Հանրապետութիւնը ազատուած, հանրային ազատութիւններն ապահովուած, կրթութիւնը աշխարհականացած, պետութիւնն ու եկեղեցին բաժանուած, ապա հարկային սիստեմի բարւոքում, աշխատաւորական օրէնքներ—այս բոլոր բարենորոգումները առտիճաններ են միայն՝ բարձրանալու համար դէպի լիակատար ազատագրութիւն, հասնելու համար ճնշուած աշխատանքի յեղափոխական նպատակին“։ (Ծափահարութիւններ)։

Եւ լինելով ինքնուրոյն մեր նպատակով, մենք միևնոյն ժամանակ ուզում ենք լինել ինքնուրոյն մեր կազմակերպութեամբ. մենք քարոզում ենք շարունակ պրոլետարիատին՝ կազմակերպուել քաղաքականապէս ու տնտեսապէս, իբրև մի կուսակցութիւն, տարբեր միւսներից, բայց ոչ իբրև կղզիացած մի մարմին, ինչպէս երևակայում են աղանդաւորները, ոչ կղզիացած իր շրջապատող միջավայրից, այլ կազմակերպուած ուրոյն ձևով, որպէսզի կարողանայ օգտուել դործողութեան այն բոլոր միջոցներից, որ տալիս է այն պատմական միջավայրը, որի մէջ նա զարգանում է“։

Այս խօսքերի մէջ ամփոփուած է բուն սոցիալիստական credo-ն, դաւանանքը, այստեղ ձևակերպուած են սոցիալիզմի այն մեծ հիմնական սկզբունքները, որ անհրաժեշտ է միշտ ունենալ աչքի առջև բոլոր երկրներում, գործելակերպի, տակտիկայի այն անվերջ այլայլանութեան մէջ, որ պայմանաւորում է տարբեր երկրների ու միջավայրերի առանձնայատկութիւններով։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

ԲԱՂԷՇԻ ՎԻԼԱՅԷԹԻ ՎԻՃԱԿԸ 1907 ԹՎԻՆ

III

Մահմետական ամբոխը.—Դարերէ իվեր թմրած մահմետական խուժանի ցասման բռնկումները, դէս ու դէն, չէ կարելի ըսել թէ նշաններ են գիտակցական զարթնումի։ Թիւրք ժողովրդին այդ շարժումները, եթէ գաղափարային հիմ ունին, Էրզրումի և Գաստէմունիի մէջ, բայց ոչ երբէք Բաղէշի մէջ։

Հոս խուժանը անգիտակ, այլասեռած և տարերային հոսանք է։ Անոր առաջնորդները, շէյխերը, կը կազմեն մի պատկառելի դասակարգ, զուրկ ոևէ կրթութենէ և բարեխղճութենէ, անհաշտ ատելութենով լաւուած իւրարու դէմ շահախնդրական գծուծ նկատումներով ու ախտերով։ Շլացած իրենց բոպէական յաջողութենէն, քանի մը ամիս հակակշռող դեր ունեցան կառավարութեան գործերու մէջ, բայց երբ այժմու փոխ-վալին, Սղերդի միւթէսարրիֆը եկաւ և շարք մը ուժգին գործադրութիւններով վերահաստատեց համիտական ռէժիմը, իրենց որջերը քաշուեցան այդ կանաչ գլուխները, օրէօր ձերբակալուելու վախէն հալածուած։

Շէյխերը և Թիւրք մասսան, ընդհանրապէս գաղափար չունին իրենց հայ հարևանների անցեալի և ներ-

կայի մասին, բնաւ չեն հետաքրքրուիր անոնց կեանքով և հետապնդումներով, ընդհակառակը կընային մոլեռանդութիւնով, կարհամարեն հայերը, կը նպաստեն ա-նոնց տառապանքին, առանց հեռատեսելու թէ այդ բախտը իրենց ալ պիտի վիճակուի շուտով։ Յարաբերութեանց և առևտուրի մէջ անոնք գործ կը դնեն բարբարոս ուժ և ճնշող անիրաւութիւններ, նկատելով հայը իբրև ստրուկ և անհոգի արարած։ Մշոյ մէջ աւելի զօրեղ և արմատական հանգամանք ունի հակաքրիստոնէական զգացումը։

Տիրապետող գրութենէն օգտուող և հարստութիւն դիզող շարք մը հաճիներ ամէնքն ալ ծանօթ իրենց վայրենի արարքներով, սկսեալ քաղաքապետ Խալիլ էֆէնտիէն և հաճի Նիազիէն մինչև հարկահան գազան Արապ Ապտուլլահը, պարագլուխներն են ամբոխին մէջ հակահայկական կոյր բնազդները արծարծելու։ Հայերը կը մնան փարիաներ և արհամարելի թիւրքերու աչքին. կառավարութեան ուզածն ալ այդ է։

Անիշխանութիւն Սղերդի շրջանին մէջ—Տիրող անիշխանութեան աննպաստ հանգամանքներէն օգտուեցան քիւրդ աւազակները և ամառնային ամիսներուն, ապանութիւնից, հրձիգութեան վայրի փոխեցին Սղերդի շրջանը, ուր աւազակապետ Շաթօ Պէշար քանդեց Խարզանի անդորր գիւղերը. քանիցս կողոպտեց Տիգրանակերտէն Պիթլիս դիմող կարաւանները։ Քիչ հեռուն Պօհտանի հովտին մէջ ժիլեանցի, հասնախցի, պաթվանցի և այլն, քիւրդեր ցեղային վրիժառութիւններով, անապատի վերածեցին Սղերդի և ճէզերէի միջև, քրիստոնեայ անտէր քիլտաններու գիւղերը։ Պաթվանցի երկու ցեղապետները արիւնկզակ Ամարէ-Թամար և Մահմատի-Մստէ, 15 օրուայ մէջ քանդեցին քիլդաններու 22 գիւղերը, հրդեհելով տաճարներ ու տներ, կողոպտելով ամէն ինչ ու սպաննելով կին, տղայ, ծեր ու քահանայ։ Մնացեալ բնակիչները փախան Մուսուլ և ցրուեցան հոս հոն։ Վերջերս հազիւ մաս մը վերադարձած է։ Գիւղերու մեծ մասը կը ներկայացնեն աւերակներու կոյտեր։ Դժբախտ քիլտանիներու սրտակտուր ողբերուն և անոնց հոգևորականներու բողոքներուն խուլ մնաց կառավարութիւնը։ Արիւնի և հրդեհի շրջանը մերթ ընդ մերթ կը վերսկսի այդ կողմերը, միշտ զոհը ըլլալով քիլտանիները և շատ ընչին փոքրամասնութիւն կազմող հայերը Խարզանի, Հիրվանի Պէտվարքի մէջ և մի մաս թշուառ ռայա քիւրդերը։

Ծամանակէ մը իվեր նոր տարր մը կաւելանայ ճընշող և հարստահարող ժողովուրդների վրայ, ռայա քիւրդերն են ատոնք։ Համիդիէներ և բռնաւոր քիւրդեր զգալով թէ քամեր են արդէն հայերու կամ քիլտանիներու կենսական հիւթերու վերջին կաթիլները, ուշադրութիւն կը դարձնեն ռայա քիւրդերու վրայ։ Մէկ քանի օրինակներ։

Օգոստոսի սկիզբին Մանազկերտի մօտ հետաքրքիր տեսիլ մը տեղի ունեցաւ։ Համիդիէ գնդապետ Մէհմէդ Էմին պէյ, անխիղճ գազան մը, իր իսկ ձեռքով ստեղծած գրգռումի մը հետևանքով, յարձակեցաւ Աղվէրան քիւրդ գիւղին վրայ, սպաննեց 30 քիւրդ, կողոպտեց ամբողջ գիւղը, հրդեհեց տները և մզկիթը և դիակները լեցուց ջրհորներու մէջ։ Յարդ անպատիժ մնաց աւազակը շնորհիւ միւշիր Զէքի փաշայի պաշտպանութեանը։

Դարձեալ նոյն ամսուն, Մշոյ դաշտին մէջ իր չարագործութիւններով հանրածանօթ պալաքցի հաճի Ֆէրօն արտաքսեց Դեղձմիրտ և Ծղակ քիւրդ գիւղերու բնակիչները տասէն աւելի սպանութիւններէ և կողոպտումներէ յետոյ։ Ընչազուրկ քիւրդերը թափուեցան Արագ և Արքավանք հայ գիւղերու վրայ, տրզրուկներու պէս ծծելով այդ թշուառ բնակիչներու արիւնը։ Քիւրդը քիւրդին տունը քանդեց և պատասխանատուութիւնը ծանրացաւ հայուն վրայ։ Արտաքսուած քիւրդերը տասնէ աւելի անգամներ բողոքեցին Մշոյ կառավարութեան, սակայն միւթէսարրֆ Սաֆէտ փաշան, մի պալատական ղղրճուկ ներքինի, կաշառուած չարագործ հաճի Ֆէրօյէն, ոչ մէկ կարևորութիւն չը տուաւ, և հայ գիւղացիներն են որ դեռ կը քաշեն այդ վայրագ քիւրդերի տառապանքները։

Հունձքերը. — Կուսակալութեան քանի մը գաւառներուն մէջ շատ քիչ վարուցան եղած էր գարնան՝ ծանօթ պատճառներով, և հունձքն ալ անյաջող եղաւ երաշտի պատճառով։ Կանխահաս ցուրտը փճացուց Մշոյ դաշտի հունձքերուն մէկ մասը. խորունկ պարտքերու մէջ թաղուած երկրագործներ հունձքերէն յետոյ ձեռնունայն մնացին։ Սէլէֆի և տոկոսաւոր ծանրը փոխառութիւններու հետևանքները տարէց տարի կը դառնան աւելի քանդիչ ու կորստաբեր, տնտեսական հաւասարակշռութիւնը արդէն կորսուած է հայ երկրագործին համար։ Անդադրում և անհաշիւ հարկահանութեան յաճախադէպ կողոպտումներու ու պաշտօնեաներու կեղեքումներու առաջ բերած տնտեսական կացութիւնը, նօրմալ պայմաններու մէջ ապրող քաղաքացիներու ու գիւղացիներու համար անըմբռնելի է բացարձակապէս։

Հիւպատոսներն ի Մուշ.—Աշնան ամիսներն մասնաւոր ուշադրութիւն գրաւեցին հիւպատոսներու ներկայութիւնը Մուշ։ Անգլիական հիւպատոսի յաճախակի այցելութիւնները Դաշտի մէկ ծայրէն միւսը պտոյտները և ռուսական հիւպատոսի քառամսեայ բնակութիւնը քաղաքին մէջ վերարծարծեցին քիչ յոյս, բայց շուտով այդ յոյսերն ալ գացին միանալ իրենց յուսախաբ նախորդներուն։

Կողոպուտներ կուսակալութեան ամէն կողմը.—Անմատչելի լեռներու կատարներուն թառած քիւրդերն անգամ կը դիտեն Բաղէշի կառավարութեան թոյլ ու անտարբեր վիճակը և իրենց ինքնածին սրադատութիւնով կըմբռնեն թէ իրենք կարող են անկաշկանդ հետևիլ իրենց տարեկան արշաւանքներուն, կողոպտել անմեղ հայ գիւղացիները և ամենադոյզն դիմադրութեան պարագային գնդակահար գետին փռել զանոնք։

Առանց ոևէ մեկնաբանութեան առաջ կը բերենք միմիայն աշնանային ամիսներուն մէջ կատարուած կողոպուտներն և հրոսակային աւարառութիւնները։

Օգոստոս 10.—Զախարցի քիւրդեր տարին 30 ոչ-

խար և մէկ քանի գոմէշ Մշշէն (Մուշեղշէն) գիւղէն (Մշոյ դաշտ)։

Օգոստոս 17.—Հասնանցի Համիդիէներ Սոխորդէն տարին 200 ոչխար, մէկ օր վերջ Տապա վանքէն 30 եզ։ Սբռաձորէն (Ախլաթ) 70 ոչխար և կողոպտեցին 3 տուն։ Մէկ քանի օր վերջ Մեծքէն (Ախլաթ) տարին 25 կով։

Օգոստոսի վերջերը դարձեալ հասնանցիներ Թեղուցէն (Պուլանըխ) տարին 70 եզ ու գոմէշ։

Սեպտեմբերի սկիզբին հասնանցիներ Պուլանըխի մէջ կողոպտեցին Ռըստամկէգիւկ հայ գիւղը, մասամբ կողոպտեցին Եօնճալու։

Սեպտ. 7.—Հայտարցիներ Կծուակից (Ախլաթ) տարին 300 ոչխար։

Սեպտ. 11.—Մօտկանցիներ յարձակեցան Բաղէշէն կէս ժամ հեռու Բաբշէն հայ գիւղին վրայ, վիրաւորեցին 3 հայ, տարին 7 ոչխար։ Նրեք օր վերջ երկրորդ անգամ յարձակեցան Բաբշէնի վրայ, տարան 40 ոչխար և վիրաւորեցին մէկ հայ։

Սեպտ. 19.—Մօտկանցիներ յարձակեցան Բաղէշէն 2 ժամ հեռու հայաբնակ Ծովար գիւղին վրայ, տարին 200 ոչխար, սպաննեցին մէկ հայ և վիրաւորեցին երկու հոգի։

Երրորդ յարձակում Բաբշէնի վրայ, տարին նորէն մէկ քանի ոչխար։

Սեպտեմբերի վերջերը Մօտկանցիներ յարձակեցան Խախուևի վրայ տարին 20 ոչխար։ Կորվու գիւղէն 30 ոչխար։ Կամախի վրայ ևս յարձակեցան բայց գիւղացիներու կողմէն ետ քշուեցան չախմախլի հրացաններով։

Բազմատանջ ժողովուրդը, համբերահատ և ոչ մի պաշտպանութեան յոյս չունենալով կառավարութեան կողմէ, դիմեցին ինքնապաշտպանութեան։ Այսպէս մօտկանցիներ ետ մղուեցան, երկրորդ անգամ Ծովարի վրայ յարձակման միջոցին։

Հոկտեմբերի սկզբին խութեցի քիւրդեր տարին Մօտկանի Մզակ հայ գիւղէն 400 ոչար։

Ծայր տուաւ մի քաոսային դրութիւն, զօրքեր և ոստիկաններ ծպտուած կողոպտեցին Պուլանըխէն ցորեն ներածող հայերը, Տիարպեքիրէն հասնող կարաւանները և ցորենը։ Սև ամպեր կը խռնուէին հորիզոններու վրայ և անկասկած պիտի պայթէր մի անօրինակ աղէտ, շուկաներու կողոպուտ և կոտորած, եթէ ուժգին կերպով չը միջամտէր Անգլիական հիւպատոսը, որ պահանջեց վալիէն հսկողութեան տակ առնել շուկան և պահակախմբեր դուրս բերել պաշտպանելու Բաղէշ ուէ պատահականութեան դէմ։ Այսօրինակ հանգամանքներու մէջ հեռաւոր գաւառներու մէջ տիրող վիճակը հասկանալի է։

Մանրամասնօրէն չենք կարող յիշել աշնան ամիսներուն՝ ծանօթ Զաթօ Պըշարի անլուր ասպատակութիւնը Խարզանի մէջ, Ճիպրանցիներու և Թելի շէյխերու կողոպուտները ս. Կարապետի վանքէն մինչև Մշոյ Դաշտի արևելեան սահմանը։ Զէրքէզ աղայի և Խմայիլ աղայի կեղեքումները Վանայ Ծովափին վրայ, որոնք քամելէ յետոյ ժողովրդին տնտեսական ուժերը, յանդգնեցան մինչև իսկ իրենց գիւղերէն ու տներէն բռնի արտաքսել Ծովափի գիւղերու հայերը։

Ինչպէս ակներև կը տեսնուի, չը լսած անապահովութիւնը կը տիրապետէ կուսակալութեան ամէն կողմ աշնան ընթացքին։ Որոշ ժամանակի մը համար խպառ դադրեցան ամէն յարաբերութիւններն ու փոխանակութիւնները, որովհետև քիւրդերու կարաւաններն անգամ ապահով չէին կրնար քաղաք հասնել։ Անիշխանութիւնը կատարեալ էր, ընթերցողը կրնայ մտաբերել ինքնապաշտպանութեան միջոցներէ զուրկ ու արգելուած հայը, մտնուած մինչև ատամները զինուած և գազանային բնազդներով օժտուած և օրէնքի բռնաբարման գրեթէ միշտ անպատասխանատու քիւրդերուն հանդէպ։

Հացահատիկները և սննդեղէնները ընդհանրապէս սղեցին՝ մտահոգութիւն պատճառելու աստիճան։ Անդադրում անձրևներ և կանխահաս ձիւնն հոկտեմբերի վերջ չը թոյլատրեցին երկրագործին վարուցան ընել։ Սովը անպայման պիտի գործէր մեծ նախճիր, եթէ ուժգին պահակներու պաշտպանութեան տակ Տիգրանակերտի Պշէրի գաւառէն դէպի Մուշ և Բաղէշ չը թափէին ցորենի անվերջ կարաւանները։ Սակայն գիները միշտ մնացին հասարակ և միջակ քսակներուն յոյժ դժուարամատչելի աստիճաններու վրայ, և դեռ կը շարունակեն անստոյգ ապագայով, ամենակենսական պիտոյքներու զրկանքին ենթարկելով ժողովրդական մեծ զանգուածներն ու գիւղացիները։

Դիւրին է հետևցնել թէ ինչ շահ կունենան վաճառական խանութպանը կամ արհեստաւորը, երբ երկրագործ դասի 75 առ հարիւրը կապրի հունձքերէն անմիջապէս վերջ կնքելով ծանր տոկոսաւոր պարտքեր։

ՄՈՒՇ, մայիս 20

Տարօնի և Սասունի մէջ գազանացած բռնապետութիւնը անսովոր եռանդով մը նոր գործի է ձեռնարկեր։ Սուրի և սովի հարուածներով իսպառ լուծեցնելու ազատագրական շարժման հալածական մնացորդները։ Պատերազմի առթիւ նորանոր բազմութիւն մը, պահեստի յուսահատ և քաղցած զինուորներն ու համիդիաները, հրոսակներու և ջանբազարներու խմբերը, պատերազմի ուրուականէն վշտացած ու սարսափած թիւրք ու քիւրդ ազգաբնակութիւնը, նոր և մեծ աղդակներ են տիրող բէժիմին աջողութեանը, գրգռելու ամբոխային ազգայնամոլութիւնը և կրօնամոլութիւնը հայ ժողովրդի և հայ յեղափոխութեան դէմ, որը կը համարին իբր պատճառ ռուսական արշաւանքի որուն, համոզուած են թէ չեն կարող դիմադրել։ Թիւրք ժողովուրդը ակամայ ստիպուած է կորստաբեր պատերազմի հրամանը լսել, և ուժէն սկսած են շինծու լուրեր տարածել որ իբր թէ յեղափոխականները պատերազմի պատճառ դառնալով կուզեն ներսէն ձեռնարկել մեծ ապստամբութիւն, որուն համար 5,000 հայ ֆէդայիներ և ռուսական սպաներ սահմանը անցնելով Տարօն կը քալեն, հետևաբար մեծ հսկողութիւններու պատրուակին տակ աւազակները, խուզարկու խմբերը շատցուցին։ Այս վերջինները հետզհետէ կաւելանան, որպէսզի կռի ատեն երկրի ներսը պահպանելու պատճառանքով, պատերազմի չը գնան և էշնահատակ ըլլան, քանի որ կարող են անզէն հայերը սարսափեցնել։ Կառավարութիւնը իր շահի տեսակէ-

տէն կը շահագործէ այդ ներքին շինծու ապստամբութեան խնդիրը, ամբոխի ազգային, կրօնամոլ զգացումները գրգռելու և զէնքի տակ հրաւիրելու համար։ Պատերազմը այդպէս սոսկում կազդէ և այժմէն կը յայտարարեն որ իրենք յիմար չեն որ ռուսական թընդանօթներու բերանը երթան և մտադրած են փախչել. պատճառ եղողին և հրաման տուողին հերը.. ըսելով։

Գիւղացի աշխատաւոր ժողովուրդի հալալ աշխատանքի, վաստակի ժամանակն է, բայց գիւղացիութիւնը մեծ մասով անսերմնացան, անլուծ շւարեր մնացեր է, մինչդեռ թահսիլտարները, պարտատէրերի կեղեքիչ վոհմակները եայլն եայլն կշտապեն քաղաքական հաւլածանքին միացնելու, տնտեսական հարուածը։ Տարիներէ ի վեր սովալլուկ գիւղացիութիւնը այժմս ստիպուած է զրկիլ իր բրտինքով մշակած հողի վաստակէն։ Շկրնալով բաւականացնել միանգամայն իր անսիրտ կեղեքիչներու և իր ապրուստի պահանջը, յուսահատ ստիպուած է ծախել իր մայր վաստակը, հողը, լուծքը, մալն ու միւլքը։ Իսկ եթէ ճշտի նոր օրէնքը որով իբր թէ աշարը պիտի դրամի վերածուի (ընդունելով գիւղերու մի քանի տարուայ աշարի միջին թիւը) և ձգելով գիւղերու վրայ, հաւասար պիտի բաժնուի հարկերու վրայ և գանձուի, առանց նայելու թէ գիւղը այս տարի ինչքան և ով վարուցան ըրեր, և ինչ չափով։

Կամ թէ չէ միջին թիւով ընդունուած աշարը պիտի ձգուի գիւղի հողերու վրայ և հողատէրերէն պիտի գանձուի հարկին հետ միասին. առանց նայելու թէ այդ հողերը ցանուա՞ծ են թէ ոչ։ Այն ատեն հայ գիւղացու դրութիւնը աւելի ու աւելի յուսահատական կը դառնայ։

Երկու պարագային ալ այդ օրէնքը, ուրիշ բանի չձգտիր բայց եթէ հայ աշխատաւոր գիւղացին հողազուրկ ընելով, հողերը կարողութիւն ունեցող աղաբէկերին յանձնել։ Նախ „օրէնքով“ զրկել հայ ժողովուրդը հողեր մշակելու կարողութենէն, միջոցներէն և ապա կրկին „օրէնք“ պահանջել որ ան հողերը մշակէ և արդիւնքէն բաժին հանէ կառավարութեան, իսկ եթէ միջոց չունի հղղը ծախէ, թողու միջոց ունեցողներուն։

Գարուն է, աշխատանքի ժամ է, բայց կառավարութիւնը այդ ինկատի չունի, որովհետև ինքը պատերազմի պատրաստութեան մէջ է։ Պահեստներ է հաւաքած և կը հաւաքէ առանց առաջուց անոնց ուտեստի մասին հոգալու, այժմս ալ սկսեր է ուտեստ ճարել գէթ օրական մի բան տալու իւրաքանչիւրին։ Բայց քարուքանդ եղած երկրում, հաց ապրուստ չը կայ։ Միւս կողմէն անօթի փորը չը լսեր։ Ուստի կառավարութիւնը դարձեալ „օրէնքով“ հայու օձիքէն կը բռնէ Դաշտի գիւղերը սկսած է խուզարկութեան ենթարկել ցորենի ամբարներ բռնելու և եղած չեղած սերմցունները կողոպտելու համար, որը հայ գիւղացու զոյգ, կէնտ եզներովը, սալլերովը կը կրէ քաղաք, ուր սակայն, հարիւրաւոր թիւրք ամբարատէրեր կան և հրապարակաւ կօտը 28—29 ղրշի (?) կը ծախէ հայ գնողին —մէկ երկու ղրշ. ալ աւելի հային համար. և անկէ ոսկին 108-ի տեղ 107 ղրշ. ընդունելով։

Կառավարութիւնը աչք կը փակէ հարիւրաւոր թիւրքերու ամբարներին առաջ, որոնց ձեռքն է քաղաքը, և այդ շրջանը։ Զանոնք գրգռել իբր թէ անխոհեմութիւն կը սեպէ կառավարութիւնը, թէ անկարելի չէ որ փոխանակ սովահար ժողովուրդը արիւնաքամ ընելու՝ աղաներու դիզած ցորեններու ամբարները բանար։

Մայիս 14-ին կնքեցին գերման-հայ որբանոցի ընդամենը 200 քիլէնոց ամբարը, առանց նայելու անոնց կողքի հազարանոց ամբարները։ Տիգրանակերտի սահմաններէն կրելիք ցորենի օլամի համար, հայ գիւղացին և անոր եզները պատրաստ են, մինչդեռ թիւրք արտօնեալ իշապաններու էշերը, ձիերը ազատ են. (հայերը զուրկ են և ձիապահութիւնով պարապելէ, այդ մենաշնորհը թիւրքերինն է)։ Կառավարութիւնը չհամարձակիր արտօնեալ էշէկճիներուն օլամի տալ։ Չէ՞ որ թիւրքութիւնը պատերազմի ատիթով գրգռուած է, ինչպէս կարելի է անոնց ձեռք տալ և ի՞նչ օրէնքով։

Քաղաքի արհեստաւորութիւնը և առևտրականութիւնը ղերծ չէ տնտեսական հարուածներէն։ Պատերազմի պատճառով առանց այն ալ կասկածելի ճանապարհները այժմս բոլորովին վտանգաւոր են դարձեր, կարաւանները կանգ առեր և ապրանք չեն փոխադրեր, Մուշի մէջ ապրանքներու ամբարներ չը լլալով. ամէն ինչ թանգացեր է առևտուրը կանգներ։ Իսկ թիւրքերի և հայերի մէջ կայ բռնի առևտուր, ճիշտը առուկուր։ Մանր արհեստաւորները և առևտրականները հաշիւնին մաքրեցին։ Ուրիշ ճար չը կայ, բայց եթէ վաստակաւոր քաղաքներ երթալ, ինչպէս Կարին։

Ընդհանուր ժողովուրդը լքեալ, յուսահատած, կարողները մեծ բազմութիւնով Ամերիկա կը գաղթեն չքաւորները կը պատրաստուեն դուրս փախչելու. իսկ ընդ. հայ ազգաբնակութեան մեծամասնութիւնը նորէն կսկսի յուզել ընդհ. գաղթի, օտարահպատակութեան և կրօնափոխութեան դժնէ հարցը։

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ, 14 Յունիս

Կառավարութիւնը անխղճօրէն կը շարչարէ հայ ժողովուրդը որ զէնք չի յանձներ, պէտք է յանձնել նոյնիսկ եթէ չունենաս։ Տանջանքի և սոսկումի տակ ժողովուրդը սկսած է զէնք գտնել և յանձնել. շատեր կը մեռնին, պակաս չեն և ինքնասպան եղողներ զէնք և միջոց չունենալնուն համար։ Կարծես իր հրէշութիւնները պարտկելու և ապագային անմեղադիր մնալու համար, կառավարութիւնը այժմէն փաստեր կը հաւաքէ հրատակելով ցուցակը բոլոր գիւղերուն որոնք իբր թէ զինուած էին մեծ ապստամբութեան մը համար։

Բախեզիկ գիւղացի երիտասարդ մը ծեծի չը դիմանալով կը յայտնէ թէ ծովեզերքը (Արջակու ծով) զէնք մը պահած է, ոստիկանները կառաջնորդէ մինչև տիր և հոն ինքզինք ծով նետելով կը խեղդի։ Որովհետև զէնք չունէր, դրամ ալ չունէր նորը գնելու, դժոխային տանջանքներէ ազատելու համար այդ կտրուկ միջոցը խորհած էր ալիքներուն մէջ գերեզմանը փնտռելով։

Ապազայի հայ ժողովուրդը տանջանքներու տակ կը տապկուի։ Թշուառ խաչէնցիներու քաշածը երևակայութենէ դուրս է։ 7 մարդ մեռան, ոմանք մեռան ծեծի

տակ և ոմանց ալ ոտքերը բևեռելով և տաղելով մեռցուցին։ Անբարոյականութեան սահմանը չը կայ։ 100 զօրք 10 օր շարունակ անլուր բռնաբարումներ կատարած են գիւղացուհիներու վրայ։ Շատ փոքրիկ աղջիկներ մեռած են լլկանքի հետևանքով։ Ցիսունէն աւելի կիներ նեղած են։

Կառավարական խուզարկու խումբը Թիմարի մէջ վերջացնելով իր գործը՝ անցած է Հայոց Ձոր և այնտեղէն 500-է աւելի հրացան ձեռք բերած է։

Խաչէնի տէր Համիդիէ գայմագամ Մահմուդ Սադըզ ընդհարում ունեցեր է խուզարկուների հետ։ Մահմուդ պէյ միւդիրին հետ կուի բռնուելով վերջինը կտուրէն կը գլորի և ոտքը կը կոտրի, ըստ ոմանց հայ կին մը բռնաբարել ուզեր ան կոտրեր է։ Այժմ Մահմուտ պէյ բողոք ըրեր է երքեանը հարպի անկարգ խուզարկութիւններուն դէմ. բանակցութիւնները կը շարունակուին՝ Միւշիր Զէքի փաշայի և Համիդիէ գայմագին միջև, բոլոր քիւրդերը ելքին կսպասեն։

Կառավարութիւնը օգտուելով Մահմուտ և Մուստաֆա պէկերու թշնամութիւններէն, կաշիատի վերջ դնել Ապաղայի կիսանկախ դրութեան. հաստատելով օրինական տուրքերը, այդ պատճառով քիւրդերը շարունակ կը գաղթեն դէպի Մաբի հողը։

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ԶԱՒԷՆ

(Յարութիւն Սարգսեան)

Վանի վերջին մեծ դաւաճանութիւնը և անոր հետևող մեծ կորուստներն ու դէպքերը թոյլ չը տուին իր ժամանակին գրելու Մշոյ դաշտում ընկած մեր երիտասարդ ընկերոջ—Զաւէնի մասին։

Զաւէնը պատկանում էր Կովկասեան այն բացառիկ ու գաղափարական ինտելիկենցիայի շարքին, որոնք յանձն են առնում զոհողութիւններ, գալու հալածանքի ու տառապանքի դասական հայրենիքը, բարբարելու ազատագրութեան սրբազան կայծը...

Նա ընիկ Գանձակեցի էր, միջին կարողութեան տէր ընտանիքի զաւակ. սկզբնական կրթութիւնը ստացել էր իրենց քաղաքի ռուսական քաղաքային դպրոցում, ապա անցել է Էջմիածին Գէորգեան ճեմարանը, ուր նա եղել է բմբոստների առաջին շարքում։ Աշակերտները առաջադրել էին մի շարք պահանջներ, որոնք արմատապէս „աշխարհականացումի" հարցը դնում էին կղերական վարչութեան... կրօնական անհամբերողութեան ոգին չը ներելով այդ բմբոստութիւնը՝ ծաղիկ երիտասարդութիւնը արձակեց դպրոցից „վատ բմբոստ վարուց"։

Զաւէնը չէր կարող առանց դպրոց մնալ. ճեմարանէն անցաւ Երևանի թեմական դպրոցը. բայց հոն էլ հանգիստ չունի, այնտեղ էլ պայթում է աշակերտական դժգոհութեան ռումբը։ Զաւէնը դարձեալ բմբոստներու մէջ է։ Այս 1905-ի բմբոստացումը բոլոր սեմինարիաների, մասնաւորապէս Երևանի սեմինարիայի պատմութեան մէջ մնում է նշանաւոր։ Վերջապէս հասարակութեան ազդու միջամտութեամբ դպրոցը վերաբացւում է։

Զաւէնը աշակերտական կեանքէն իր շուրջը հաւաքած է որոշ գաղափարական աշակերտներ. նրա սենեակը եղել է գաղափարական վիճաբանութիւնների, ոգևորութեան ու իտէալական ծրագիրներ կազմելու վայր։ Աշակերտական սեղանից իսկ մասնակցել է յեղափոխական գործին հէնց Դաշնակցութեան միջոցով. նա եղել է պրօպականդիստների շրջանակի լաւ անդամներից մէկը...

Բայց Զաւէնի դէմքը աւելի որոշ կերպով պարզուեց ու ձևաւորուեց բուն երկրում։

Դպրոցը աւարտելու առաջին տարին հարց է դնում երկիր մտնելու։ 1906-ի ամառը արդէն Ս.. է, ուր մնում է մի առ ժամանակ սկզբնական փորձառութիւն ձեռք բերելու։ Նրան միշտ յիշում են իբր իրենց սիրելի ուսուցիչներէն մէկը։ Ս...ի բոլոր գիւղացիք, մանաւանդ տանջուած աշխատաւորութիւնը լաւ կը ճանչնայ „հողի և ազատութեան" երիտասարդ պրօպականդիստ—սոցիալիստին։

1907-ի մարտին երկրի ընկերներու հրաւէրով նա ճանապարհւում է դէպի Վան... ով ծանօթ է Ցածկահայաստանի ձմրան, ով կեանքի մէջ դէթ մի անգամ դժբախտութիւն կամ երջանկութիւն է ունեցել յեղափոխական գաղտնի ճանապարհ գնալու, այն էլ ստով 7—8 օր շարունակ, նա միայն կարող է ըմբռնել այն տանջանքներն ու գերմարդկային համբերութիւնը, որով 20—21 տարեկան մի երիտասարդ, փափուկ կեանքին սովոր մարդը կարող կը լինի յաղթանակել ու հասնել իր նպատակին։ Միշտ սարսափով ու մեծ հիացմունքով կը պատմէր իր քաշած նեղութիւնները, մինչև կուրծքը ձիւների և ջրերի մէջ հագուստով քայլելը և դրան ուղեկցող գաղափարական երազները։ Անանձնապէս շեշտում էր այն անհեթեթ թէորիան որ Կովկասեան երիտասարդութեան որոշ շրջանում շաբլոն կերպով բերնէ-բերան պտտւում էր, „որ իբր թէ Դաշնակցութիւնը իր գործունէութեամբ միայն, այն էլ գիտակցաբար, ծառայում է կովկասեան բուրժուազիայի շահերին նրա համար բանալով մի արդիւնաւէտ շուկայ Ցածկահայաստանում..."։ Զաւէնը չէր հանդուրժում աշխատաւոր ժողովրդի քաղաքական ու տնտեսական ազատագրման համար այքան տանջանքները, զոհողութիւնները վերագրել այդ անհեթեթ մտածումին։

Զաւէնը Վանում, շուտով ցոյց տուեց իր կրակոտ պրօպականդիստի կարողութիւնը, և ստեղծում է մի մեծ երիտասարդական հոսանք, որը մկրտում է „Նոր-Սերունդ" անունով։ Զաւէնը այս շրջանի լաւագոյն աշխատող ուժերից մէկն էր, և միայն տարուած էր իր սիրած պրօպականդի գործով։ Նա օժտուած էր եռանդով և բազմակողմանի ընդունակութիւններով, նա գիշեր ցերեկ քաղաքում և գիւղերում, լեռներում և հանգստութեան վայրերում դիրքը ձեռքից վայր չէր ձգում, զէնքին հետ, և որ աւելի կը դեղեցկացնէր զայն՝ անոր յեղափոխական շիտակութիւնը, մանաւանդ անկեղծութիւնն էր։

Ամառը ձգելով քաղաքի համեմատաբար տանելի կեանքը նետուեցաւ ժողովուրդի խաւերուն մէջ, Վասպուրականի գիւղերում, ուր կը տանէր պրօպականդի և կազմակերպական գործերը։

Զաւէնը Դաշնակցական երիտասարդութեան թափով ձգտում է դէպի աւելի մութ ու խաւար անկիւններ, դէպի այն վայրեր, ուր պահանջում է աւելի մեծ վտանգ և զոհողութիւն։ Մշոյ դաշտը այդ տեսակէտից ամենատիպիքականն էր։ Ցածկի կառավարութիւնը իր յոռի բէժիմի ամբողջ թոյնը թափում էր այդ ժողովրդի գլխին, և եւ կիրը դարձել էր դժոխք։ Զաւէնը նետուեցաւ այդ վայրը, իր հետը առնելով զէնքը և իր սիրած գրքերը... „Ձնաք բարեաւ... Անհունապէս երջանիկ եմ գնալու համար"։ Ահա նրա վերջին խօսքերը...

Եւ մի քանի շաբաթից յետոյ բօթաբեր լուրը... Զաւէնը, Սեյդօի և Ջնդօյի հետ, տմարդի կերպով զոհ գացած են Ղասրմ պէկի դաւաճանութեան, հէնց իր տանը դաւաճան պէկի հետ տեսակցելու ժամանակ։ Եւ այսպէս գաղափարական երիտասարդը 29 տարեկան հասակում պերեզման իջաւ օտար, բայց պաշտած հորիզոններու տակ...

Յարգանք պարտականութեան դաշտում ընկնողների յիշատակին։ Փառք սիրելի Զաւէնի անշիրիմ նշխարների առաջ։

Թող ծնողները բանաստեղծի ասածի պէս լան և ընկերները Զաւէնի պէս մեղամաղձութեամբ երգեն

„Լաց մերիկ ջան, որ էլ չեմ գայ,
Վէրքս խորն է տուն չեմ գայ"...

ԱՐՄԵՆԱԿ ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆ
(Զաւէն)

Արմենակ իր կորովի և իր տառապող ցեղին հարազատ զաւակն էր, որու մահուան պարագաներուն մէջ տիրող գիծը և ոգին անձնուիրութիւնն է իր հերոսական բարձրութեանը մէջ։

Բնիկ Շապին Գարահիսարցի էր և բարեկեցիկ ու բարի ընտանիքի մը զաւակ, սակայն իրենց վաճառատան և ջաղացքներու հրդեհումով այդ երբեմնի փայլուն ընտանիքը իր նախկին վիճակը կորսնցուցած և մինչև իսկ դժբախտացած էր։

Արմենակի մանկութեան մէջ արդէն կը նշմարուի անոր մէջ տիրող ուժեղ և համակրելի գծերը. ըմբոստ և յանդուգն ոգին և դէպի իր ընկերները ցոյց տուած սէրը նոյնիսկ ամենածանր վտանգներու առեն։ Օր մը դպրոցին մէջ կը տեսնէ երկու ժամանակացոյց թիւրքերէն և հայերէն, առաջինը յատուկ և կեղծաւոր խնամքով մը գեղագրուած դասատուին կողմէ և բարձր տեղը կախուած, իսկ հայերէնը աղտոտ ու խեղճուկրակ և անշուք տեղը դրուած։ Արմենակի արդարավրէժ հոգին չհանդուրժեր այդ նախատինքը իր մայրենի լեզուին, և հայերէնը իր արժանաւոր տեղը կը դնէ։

Գաղտնապահութիւնը, Արմենակի նկարագրին էն բնորոշ գիծը և գրեթէ տեսակ մը բնածին դաւանանքը եղած է։ Ինչ որ կրնէր—և շատ բան կրնէր—ոչ վարժապետները կիմանային ոչ իր ծնողքը։

Հայրենիքէն ելլելով մէկ երկու տարի Կիպրոսի դպրոցը մնաց։ Քանի կը զարգանար և կը խելահասէր լուրջ ու յեղափոխական ընթերցումներու ազդեցութեան տակ, իր զգացումները կը ձևաւորուէին և իր ձգտումները հաստատ իդեալներ կորոնէին։ Անոր զգայուն հոգին ազգային իդեալը ընտրեց որ փշէ պսակը ուներ իր ճակտին վրայ։ Երբ Սև ծովը անցաւ և եկաւ Պոլիս իր էութիւնը աւելի թրծուեցաւ։

Սուլթանի մահափորձի առեն, արդէն յեղափոխական շարքերուն մէջ մտած, ընկերներու վրայ բարոյական և խրախուսիչ կշռող ազդեցութիւնը ունեցաւ. կը կրթէր զանոնք շարքաշութեան համար, անձնուիրութեան համար, հերոսութեան համար որուն հոյակապ օրինակը ինքը պիտի տար ապագային։

Մինչև վերջը մնաց գաղտնապահութեան հիանալի մարմնացումը. և ի՜նչ ճարպիկ ընդունակութիւններով խոյս կուտար լրտեսներու աններող կասկածներէն։ Երբ զնդանին մէջ գազան կառավարութիւնը անլուր չարչարանքներու տակ ուզեց գաղտնիքներ խլել Արմենակէն, սա հնութեան հերոսին պէս կամ պէտք էր լեզուն խածնէր փրցնէր կամ մահուան մէջ անմահանար։ Արմենակ վերջինը ընտրեց, դիւցազնի մահով մը ողջակիզեց իր կեանքը 22 տարեկան շքեղ հասակին մէջ, իր գաղափարին և նկարագրին բովանդակ ատուածացումով։

Արմենակ բացառիկ տիպար մրն էր անոնցմէ, որոնք յեղափոխական կրկէսին մէջ իրենց վճռական քայլերուն հետքերը կը ձգեն և ցեղին կորովը կընդգծեն և միանգամայն Նիյչէի հերոսներուն պէս մահուան համար կը հասունանան մարանչելով...

ՀԱՅՈՐԴԻՆԵՐԸ

XVII

ԿԱՄՔԻ ՄԷՋ ԴԻՒՑԱԶՆ

Մարդուն մէջ ամենէն գեղեցիկը, դարձեա՛լ, կամքն է։

ԴԷԿԱՐՏ

Լսեցէ՛ք, ստրկութեան տակ վա՛տօրէն ծռած կամ բռնութեան դէմ բռունցք շարժող ժողովուրդներ,
Լսեցէ՛ք, ե՛ս, այսօր, ձեզ՝ կռանիդէ կամք մը պիտի երգեմ և տիտանեան անուն մը աւետեմ,
Դարերուն մուրը մաքրող, պատմութեանց ոսկին նորոգող Հայորդին պիտի երգեմ,
Ճակատամարտներու ճամբուն վրայ կանգուն զինուորնե՛ր, կամ ապշահար յուսահատնե՛ր, լսեցէ՛ք։

Կեանքի հովիտէն քալող երկու օրուան անցորդներ, դուք վսեմնե՛ր կամ վատե՛ր, հերոսնե՛ր և հսկանե՛ր,
Թափառիկ կամ փարթամ, մակաբոյծ կամ իմաստուն, իշխա՛ն և աշխատաւո՛ր, յոգնա՛ծ կամ գերազօր,
Արդարասէր կամ չարամիտ, և գերիներ և գաճաճներ, այս ամէնի նուագը ձեր բոլորին համար է,
Լսեցէ՛ք, ոմանցդ համար ի խրախոյս կ'երգեմ, և ոմանցդ համար ի պատիժ, լսեցէ՛ք։

Կարմիր գաղտնիքներու գանձապահին ոսկիէ պատանքն է որ ձեր ամենուն առջև պիտի քակեմ,
Անիկա այլևս դիւցազնութեանց խորհրդանիշն է և գերագոյն թռիչքը Կամքի ճերմակ մրրկին...
Անոր մահուան օրը ժամանակին թիւերուն մէջ արոյրէ օղակ մըն է ամէն մեծութիւն իրեն շղթայող,
Անիկա հեգնութիւն է, ուժ է, թոյն է, սեր է և ժպիտ, լռութիւն մըն է փոթորկաձայն և աղաղակ մը ապառաժեալ։

Եւ Անիկա այսպէս որոտաց. „Ա՛հ գաղտնիքը իմս է, կարմիր սրբութիւնը և իմաստը իմ գիտակիցդ գոյութեանս,
„Բարբարոսօրէն իմս է և ո՛չ ո՛քի, ո՛չ շղթային, ո՛չ ծեծին, ո՛չ սուրին, ո՛չ հուրին, ո՛չ հարուածին,
„Բոլորո՛վին իմս է՝ գաղտնիքը և ինձի հետ, իմ մտածումիս և մարմնիս հետ եղբայրօրէն թո՛ղ մոխրանայ,
„Որովհետև ե՛ս եմ իմ օրէնքս, վճիռն ալ ե՛ս, դատաւորն ալ ե՛ս, տառապողն ալ, յուսացողն ալ, ըմբոստն ալ ե՛ս։

„Ես իմ ուխտիս և աստուածն եմ և կռապաշտը և ատրուշանը և նաժիշտը՝ և սպասարկո՛ւն,
„Ուխտադրո՞ւժ, դաւաճա՞ն, հայրենատեա՞ց, ա՞հ ներեցէք, քրքիջիս սեր կրնայ ձեր արևը խաւարել,
„Դատաքննիչ պարոններ... բայց հայ արիւնին մտածեցէ՛ք օրէնսդիրնե՛ր, բանտապանե՛ր, բռնաւորնե՛ր,
„Այն արիւնին որ գետերու պէս, հայրենիքիս գարուններուն մէջէն, ձեր օրէնքին տակ, եկաւ անցաւ։

„Ես չե՛մ ուրանար, ե՛ս ալ ազատութեան ոսկի արօրովն Հայրենիքիս արիւնոտ հողը երջանկօրէ՞ն հերկած եմ,
„Ես ալ ձեռքի ըմբոստ և խորիմաստ շարժումով մը, ակօսներուն մէջ, վրէժինդրութեանց վայրագ սերմը ցանած եմ...
„Ես չե՛մ ուրանար, բայց կործանիչ հունձքերուն գաղտնիքը ի՛մս է, վաղուան մրրկին գաղտնիքը ի՛մս է,
„Ո՛չ կը վախնամ, ո՛չ կ՚ուրանամ, սարսափի դուռներուն բանալին ձեռքս է, կայծակներն իսկ չեն կրնար զայն յափշտակել,
փորձեցէ՛ք։

„Ես գաղափարիս Ցաճարին և հիմնաքարն եմ, և մաքուր երգը, և աղօթքը, և քրմապետը և իր գմբէթն ահաւէն,
„Ես աւանդապահն եմ ցեղիս ցաւին, իր յոյսին, իր հաւատքին, իր յարութեանը և իր արդար կշիռին,
„Ես աւանդապահն եմ սերունդէ սերունդ և զինուորէ զինուոր ինձ և ս վիճակուած ազատ և սրբազան երդումին,
„Ես եռահարիւր հազար դիակներու դիմաց կանգնող և պատնէշն եմ և պաշտպաններէն մին անբիծ։

„Ես ան եմ որ թէ տատրակ է և թէ առիւծ, ես ատելութեանց հրդեհ եմ և սէրերու հոսանք,
„Ես քաղցրութեանց բաժակ եմ և արդարութեան շուշան,չարիքին դէմ մերկ սուր մ՚եմ և եղբայրութեան առջև ձիթենւոյ ճիւղ,
„Ես ալ ըմպած եմ մարդկութեան մտածումին աղբիւրներէն և անոր խոհապաշտութեան ծառերէն ես ալ իմ պտուղս քաղած։
„Ես այս բոլորին անընկճելի աւանդապահն եմ։ Մեռեալ ընկերներ ձեր մահերուն մարմար դուռը իմ առջևս ալ բացէ՛ք։

„Օրերով խոստովանէ՛ գոռացին։ Ես լուռ էի և ձեռքերս բոլո՞ր եղունգներս քաղեցին։ Անարցունք մնացի և անբարբառ։
„Խոստովանէ՛ գոռացին երբ հուր-արիւնս, իմ տասը մատներս, շղթաներս ի վար, ոտքերուս առջևն հոսեցաւ,
„Ժամերով և ժամերով, ծորակ առ ծորակ, հոսեցաւ, ինչպէս աղբիւրներ աւազանի մը խորն,
„Եւ ես տեսայ, ըմբոստ կամքիս երկաթ ժպիտը իմ արիւնիս հայելիին մէջը շքեղօրէն նկարուած...։

„Ա՛հ խեղճ ձեռքեր որոնց մէջ յաճախ ճակատս յենած, բանտիս մէջէն, հայրենի հովերուն լացին կ՚ունկնդրէի,
„Խեղճ և ճշմարիտ ձեռք որ ատենով քերթողին գրիչը և կարճին սուրը ունէիր ափիդ մէջ,
„Ձեռք ահաւոր, արիւնաթոր ձեռք, սոսկումներու ձեռք, քու վրէժդ ընկերներուս կը կտակեմ...
„Ընկերներ, իր գրիչն ալ ձեզ, իր սուրն ալ, իր դորովն ալ, իր բռունցքին մէջի կայծակներն ալ ձեզ...։

„Այս իրիկուն նորէն շղթաներս քակեցին և շողշողուն երկաթները ջրվէժի մը նման ուսերէս վար թափեցան,
„Անսահման թիարանը դողաց և պատէ ի պատ, խուցէ ի խուց և սրտէ ի սիրտ խուլ շռինդն արձագանգեց...
„Խոստովանէ՛ գոռացին, արևածագը քեզ պայմանաժամ...։ Ցուսա՞ լ։ Նոյնիսկ Ցոյսը վատութիւնէ ճակատագրիս հանդէպ։
„Ես իմ գաղտնիքս փրկեցի...։ Վերջալո՛յս, քու մահդ առաջ, այս իրիկուն, ես իմ մոխիրս պիտի ստեղծեմ...։

„Կանթե՛ղ, խուցիս խորերէն յուսահատներու աստղին նման ալ կը բաւէ՝ որ զիս ողբաս,
„Քու կայծ աչքիդ շիթ մը կայծը կրնայ զիս անհասելի մեծութիւններու կատարները բարձրացնել,
„Եւ եթէ դարերով ալ այսպէս նշուլես խաւարը խաւար պիտի մնայ, տառապանքը տառապանք և ոճիրներու գահը գահ,
„Դժբախտներուն լո՛յս պէտք է տալ, լո՞յս ամբոխներուն, ըլլա՛յ մտքէն, ըլլա՛յ մատեանէն, ըլլա՛յ սուրէն, ըլլա՛յ մարմինէն։

„Այսպէս դուն, արտասուաթոր կանթեղ որ կամքիս մրրիկներուն քով քու թշուառութիւնդ կը պլպլաս,
„Արիաբա՛ր մօտեցիր, քու բիւրեղ անօթիդ իւղովը մարմնս, մազերս և սիրտս պիտի օծեմ...
„Ու վառ պատրոյգդ օձի մը նման թող շրջի և գալարուի իմ վրաս, մինչև բիբերն իմ ահաւոր աչքերուս...
„Գաղտնիքը իմս է։ Ես գիտեմ որ կրակներէս Հայրենիքիս ապառնի արևին մէջ ճառագայթ մը կ՚աւելցնեմ։

„Այլևս մնաք բարե՛ւ, զինակիցներ և ընկերներ, դուք հեռաւոր կամ բանտակից, հալածական կամ ազատ,
„Մնաք բարե՛ւ։ Ես իմ խարոյկս կը վառեմ... Արեգակն ալ դիմացս դիւցազնի մը պէս կը վախճանի։
„Ա՛հ մեռելները հետս խօսիլ սկսան... դուք մտիկ ըրէք... մեռելները բոլորը մէկ ծափահարել սկսան... ո՞վ կը ծափահարեն...“
—Զօրաւորները միայն անմահ են։Արցունքը տկարներուն՝և ծունկի՛ իջէ՛ք, ծունկի՛,ծունկի՛ ամբոխնե՛ր, ծունկի՛ և սոսկացէ՛ք...։

Մարմինը իր վրայ վառած կրակին մէջ գիշերն ի բուն ճարճատեցաւ։ Առաւօտուն, դատաւոր, բանտապահ և չարչարիչ,
Բոլորը մէկ, բանտախուցէն ներս խուժելէն իրենց ակռաները կրճտեցին, մտրակները շարժելով և լուտանքներ տեղալէն
Յետոյ չորս մեռելակիներ դագաղ մը ուսերնուն վրայ և այդ դագաղին մէջ ոսկորներ, պարկ մը մոխիր և գանկ մը դրած..
Հերոսին զահանդական ոճիրները, ոճիրներու ոստանին մէջէն, լռին թաթառի մը նման, դէպի գերեզմանոց տարին։

Ապագաներուն մէջ, Դիւցազներգու մը, հայրենի հրապարակի մը վրայ, կանիդէ կոթողի մը պատուանդանէն, ԱՐՄԵՆԱԿԻՆ Գանկը ի ձեռին, զայն աստղի մը նման շողացնելով, փառքի այդ կատարը զետեղելէ առաջ, պիտի ըսէ։
—Մօտեցէ՛ք փրկուածներ, երջանիկներ, եղբայրներ կամ ապերախտներ, դուք երիտասարդք և դուք ծերունիներ, Եւ ձեռքիս մէջ հանգչող դանձատուփին նայեցէ՛ք, այսօր հերոսի մը տօնն է որ Հայրենիքը կը տօնէ։

—Հանդիսատեսնե՛ր, ձեր աչքերը այս գանկին սևեռեցէք. ես այսօր Անճառելին ճառել պիտի ջանամ...
Այս ոսկրատուփը իր մէջ կը պարունակէ իր հարազատ մարմնին ադամանդէ մոխիրին հետ,
Անբծութիւն և հաւատք, երազ և իդէալ, իր զինուորի արիւնէն կաթիլ մը արիւն և հուրէ յոյս,
Դիւցազնի մը կամքէն քանի մը կայծեր և իր ըմբոստի երգերէն և անէծքէն սարսուռներու քանի մը ձայն։

—Անիկա փոթորիկ եղաւ և զեփիւռ, բռնաւորին դէմ շարիք և խաղաղութեան համար լոյսի առաւօտ,
Անիկա ուժ եղաւ և ապառաժ, նոր օրերու ոգեվիրայ և փրկութեանց հիմնադիր,
Բայց, զայն՝ այս երկնքին հրաշալեացը տակ և ձեր պայծառ պաշտամունքին վրայ յաւերժացնելէ առաջ՝
Հայ-ժողովո՛ւրդ, այս աճիւնասափորին տակէն, իր փառքը երգելով, նախ, կարդ առ կարդ, յառաջացէք...։—

. . . . . .

ՍԻԱՄԱՆԹՕ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՃԳՆԱԾԱՄԸ.—Վերջապէս Շահը յաջողեցաւ տապալել Մէճլիսը՝ որուն գոյութիւնը շատ խօշ չէր թուէր իր վեհապետական ձգտումին, թէև քանիցս երդում կերած էր, որ պիտի յարգէր իր հօր ազատական կտակը շնորհուած „անագատ“ Իրանին։ Սակայն այդ երդումը պարսկական քէթմանն էր (կեղծութիւն), որ ամբողջ բռնապետական Իրանի հասարակական աշխարհայեացքը կը բնորոշէ։ Դեկտեմբերի պետական հարուածի անյաջող փորձէն յետոյ Շահը յայտարարած էր իսկ որ „Մէճլիսը սուրբ հաստատութիւն“ մըն է։

Հակառակ այդ երդումպատառներուն՝ Շահին և Մէջլիսին միջև վիհը կընդլայնէր. մահափորձը աւելի զգայուն ըրաւ այդ հակառակութիւնը, մանաւանդ որ Էնճիւմէնները, Մէճլիսին փուշտիպանները, չէին դադրեր սպառնալէ. և Շահի մահոգութիւնը օրօրի կը ջղայնանար, սակայն կը պակսէր, երկու կողմին ալ, զիրար զգեցնելու ջիղը,—դրամը։

Սահմանադրութիւնը ճիշդ է լայն արձագանք գտաւ երկրին մէջ, բայց անսահմանութիւն մը կար ուր տարրերը փարսախներով, մէնզիլներով կը բաժնուէին։

Շահը յաջողեցաւ իր ուժերը վերակազմել, Էմիր Պահատուր ճէնկի հրամանատարութեան տակ, ամրացաւ Շահպաղի պալատը և խիստ պահանջ դրաւ Մէճլիսին իրեն յանձնել ազգայնականներու պարագլուխները։ Մէճլիսը մերժեց՝ Էնճիւմէնականները զօրքերուն վրայ կրակ ըրին, յունիս 23-ին։ Առիթ էր։ Զօրքերը ռմբակոծեցին Պահարիսդանի դալատը, Սիփահ Սալար մեծ մզկիթը, ուր ապաստանած էին, յեղափոխականները և ուրիշ հաստատութիւններ։ Ձերբակալեցան ընդդիմադիրներէն, յեղափոխական խմբագիրներէն, որոնք կատաղի ժաքոպէններ համարուած էին։ Շահը տաքտաք կախել տուաւ մէկ քանի պարագլուխներ, ինչպէս և Սուրէսրաֆիլ թերթին խմբագիրը որ սպաննուելէ առաջ աղաղակեց „կեցցէ սահմանադրութիւնը, անկցի դաւաճանը“։

Շահը դրութեան տէրն էր շնորհիւ Էմիր Պահարուրի և ռուս հրամանատար Լիախովի։ Անողոք հալածանքը և սարսափը ընդհանուր էր։ Երէկի ազատաշունչ թէհրանը, սուգի մէջ ինկաւ։ Բոլոր սահմանադրութեան մեծ դերակատարները պաստ ժտան դեսպանատուները, բացի գերմանականէն որ վայրենիօրէն իր դռները փակեց մահուան ճիրաններէն փախստականներուն առջև։ Գերմանական մեծ թերթ մը կընդունի որ այդ քայլը մեծապէս պիտի վնասէ գերմանական հմայքին Պարսկաստանի մէջ։

Ռուսիոյ մատը կուզեն նշմարել, Պարսկաստանի այս արիւնոտ պետական հարուածին մէջ։ Լիախով, Շաբշալ՝ վերջինը Շահի ռուսերէնի ուսուցիչը, թելադրիչը կը համարուին կատարուած մեծ ոճիրին։ „Թայմզի“ թղթակիցը կը մեղադրէ, կօզակ Լիախովը իբր դրգիչը Պահարիստանի ռմբակոծման և անոր լիազօրութիւն տալը կըսէ՝ բռնաբարում մըն է անկլօ-ռուս համաձայնութեան։ Հաւանականութիւն կը գտնէ ռուսական ինդրիկը անով, որ Ռուսիան սահմանադրականութեան ամէն մէկ քայլին մէջ կը նշմարէր հակառուսական զգացումը։

Շահը Մէճլիսը խորտակելէ յետոյ, յայտարարեց, ժողովուրդը հանդարտեցնելու համար, որ ինքը սահմանադրութիւնը պիտի պահպանէ, և երկիրը պիտի օժտէ բաղձալի յառաջդիմութիւնով։ Կը խոստանայ երեք ամսէն նոր ընտրութիւն կատարել։

Անգլօ-ռուս համաձայնութիւնը, որ Պարսկաստանի դէպքերու պատճառով երկիւղ կար թէ կազդուէր, ընդունեց „անմիջամտութեան քաղաքականութիւնը“։ Սակայն Անգլիոյ մէջ որոշ մտահոգութիւն կը տիրէ Պարսկաստանի մէջ ռուսական ինդրիկներու մասին։

Թէպրիզը որ Սահմանադրականութեան ամրոցն էր սկզբէն ի վեր, Մէճլիսի անկումին վրայ, յեղափոխական դրօշակ պարզեց, և ցարդ անողոք և արիւնահեղ կռիւները կը շարունակուին ազատականներու և յետադիմականներուն միջև։ Յետադիմականներուն կօգնեն դրսէն գացած պաշիպօզուկներ։

Եթէ Շահը կրցաւ քանդել Խորհուրդը և արիւնի մէջ խեղդել ազատական շարժումը, բայց հաւանական չերևար որ կարողանայ իր ներկայ ուժերով և միջոցներով, խաղաղացնել ամբողջ երկիրը, ուր սահմանադրական գաղափարը, գրեթէ գրկաբաց ընդունուած է, և լաւագոյն ապագայի երևակայութիւնը բորբոքած երազուն ժողովուրդի մը որ տառապանքով և տենչութիւնով ապրած է միայն։

Անգլօ-ռուս համաձայնութիւնը զգալի կըլլայ սահմանագլխի կռւին մէջ ևս։ Ռուս դեսպանը, որուն ուժ կուտայ անգլիականը, պահանջեց Դռնէն, ետ քաշել զօրքերը Պարսկաստանէն և վերջ դնել աւերաւերումին և քրդերու ասպատակութիւններուն որոնց „անտարբեր չկրնար մնալ Ռուսիան“։ Սալմաստը և Ուրմիոյ գաւառը յետին թշուառութեան ու հալածանքի մատնուած են Թահիր փաշայի ձեռքէն, որուն տղան ալ Վասպուրականը կաւերէ։ Երևի այդ սերունդը ծնած է պատուհաս ըլլալու համար միայն։ Մեծ վէզիրը ապահովցուցերէ ռուս դեսպանին որ պիտի հրամայէ իսկոյն որպէսզի զօրքերը դուրս գան և սակայն դեռ.. կը մնան…

***

Վերջի ամենամեծ քաղաքական դէպքը Անգլիոյ կայսեր և ցարին տեսակցութիւնն էր յունիս 9-ին, Ռէվէլի ջուրերուն մէջ։ Ասիոյ երկու դարաւոր ոսոխները, „կէտը“ ու „արջը“, կը բարեկամանան։ 1907 օգոս. 31-ին, արդէն կնքած էին պայմանագրութիւն մը, որով երկու տէրութիւնները Ասիոյ մէջ իրենց անհամաձայնութիւններուն վերջ կուտային և իրենց շահերու և ազդեցութիւններու սահմանները կը գծէին։ Անգլիոյ համար, հինաւուրց մոսկովական երկիւղը, երկար ատենի համար փարատուած է։ Նոր համաձայնութիւնը, երկու պետութիւններուն համար Ասիոյ մէջ քաղաքական գործունէութեան նոր և աւելի վճռական շրջան մը կը բանայ, որուն ազդեցութիւնը զգալի պիտի ըլլայ, հաւանօրէն, Հնդկաստանէն մինչև Ադրիական։

Տևտոնեան կատաղութիւնը փրփրած է, իր շուրջը լարուած դաւաճանութեան համար որուն հեղինակը կը համարին Էդուարդ թագաւորը, որ կը ձգտի „շրջանակի“ մէջ առնել Գերմանիան։ Թէև ցարը և կայսրը, իրենց բաժակաճառերուն մէջ, կը հաւատեն որ անգլօ-ֆրանկօ-ռուս համաձայնութիւնը.. „աշխարհի խաղաղութիւնը ապահովելու “համար է, որուն կսպառնայ միայն Գերմանիան։

Թիւրքիա նոյնպէս մտահոգ է, որ մի գուցէ Ռէվէլի տեսակցութիւնը իր գլխուն վրայ անակնկալ ռումբ մը պայթեցնէ։ Թիւրքերը, առանց գիտնալու թէ ինչ խօսուած է, տխուր նախազգացում մը ունին, այնպէս որ գերմանական մամուլը ձայնակցելով թիւրք շրջանակներուն մէջ տիրող կարծիքին, կը յայտարարէ որ „ունէ հարուած Թիւրքիոյ իրաւունքներուն՝ արձագանք կըգտնէ ամբողջ մուսիլման աշխարհին մէջ“։ Համիսլամական ուրուականն է նորէն, որ Գերմանիան կը ցցէ Անգլիոյ աչքին և կուզէ ահ ազդել։

Քայզերը կը ջանայ Գերմանիոյ հայրենասիրութիւնը ոտք հանել. բոլոր դասական խօսքերը, որոնք գերմանական ամբարտաւանութիւնը և ուժը կը խտացնեն, կը բչէ ամէն տեղ։ „Գերմանիան երբեք այնքան քաջութիւնով պատերազմած չէ, որքան երբ ամեն կողմէ կը յարձակուի“։ Ակնարկելով Գերմանիոյ դէմ հաւանական պատերազմին, բացագանչած է զօրքերուն առջև „թող գան, մենք պատրաստ ենք“։

Գերմանիան այս բոպէիս ահուդողով կապրի, հակառակ իր ճառթճռութեններուն, որովհետև „մահու և կեանքի“ հարցը դրուած է իր առջևը։ Լուր կայ որ Գերմանիան մտադիր է Թիւրքիան երրեակ դաշնակցութեան մէջ մտցնել, ինչոր պատերազմի պահուն պատկառելի ույժ մըն է Ռուսիոյ դէմ։ Թիւրքիան պատրաստ կերևի, առահի, նետուելու Գերմանիոյ և Աւստրիոյ գիրկը իր դիրքը փրկելու համար։

Միւս կողմէ Պուլկարիա ձայն կը բարձրացնէ յայտարարելով որ Անգլօ-ռուս բարենորոգումի ծրագիրը զինք չգոհացներ, թէ ինք իր վրայ միայն յոյս կը դնէ այլևս իր շահերը պաշտպանելու համար։ Իշխանը նոյնպէս կը ծանուցանէ Անգլիոյ թագաւորին, թէ իր դրութիւնը վտանգալից է և թէ պիտի ընտրէ կամ յեղափոխութիւն Պուլկարիայի մէջ կամ պատերազմ։ Արևելքի գործեան հանգոյցը սուրով պիտի լուծուի, ատոր համար ամէն մարդ իր դաշոյնը կը սրէ և վառօդը կը չորցնէ…

ԱՄՍԱԼՈՒՐԵՐ

,,*Berliner Lokal Anzeiger*‘‘-ի յունիսի 13-ի թւին մէջ հրատարակուած է։

,,Վանի մօտ թիւրք զինւորներու միջոցով ստորերկրեայ ճարպիկօրէն շինուած այրի մը մէջ գտնուած և գերի բռնուած են Վանի Դաշնակցութեան կօմիտէի գլխաւորը՝ Արամը, Վանի փոխնահանգապետը սպանողի եղբայրը Վահրամը և կօմիտէի քարտուղար Պետրոսը‘‘։

—

„Դրօշակի՝ հեռագիրը *Ligue des Droits de l’homme*ի նախագահին, Լիօն գումարուած համաժողովին առթիւ յունիս 6-ին.--

„Պրէսանսէ,

Նախագահ „Մարդու Իրաւունքներու Միութեան“։

„Ողջունենք Մարդու Իրաւունքներու Միութեան քաջարի համաժողովը, որ կը ներկայացնէ յեղափոխական Ֆրանսայի լաւագոյն աւանդութիւնը։ Յոյս ունինք որ Միութիւնը պիտի կրկնապատկէ իր կորովը, ազնուագոյն կռիւը մղելու համար ինպաստ հարստահարուածներուն‘‘։

—

Եւրոպական թերթերէ.

,,Մարդու Իրաւունքներու համաժողովի բացման ճառին մէջ, նախագահը, պր.-Ֆրանսիս դը Պրէսանսէ, յայտարարեց թէ Միութիւնը, պէտք է, աւելի քան երբէք, գործ դնէ իր ազդեցութիւնը Արդարութեան համար, համաձայն Յեղափոխութեան Սկզբունքներուն։ Յետոյ նախագահը, ծափահարութիւններու մէջտեղ, կարդաց ,,Դրօշակի‘‘ խմբագրութեան համակրանքի հեռագիրը‘‘։

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱԶԴԵՐ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

(Քաղւածք Հ. Յ. Դ. 1908 թ. Խորհուրդի որոշումներից)

—

Խորհուրդը որոշում է.

1) Հ. Յ. Դաշնակցութիւնը իբրև կուսակցութիւն չի մասնակցում կաթողիկոսական ընտրութիւններին։

2) Դաշնակցական անհատները իբրև սոսկ քաղաքացիներ ազատ են վարւելու ըստ իրենց հայեցողութեան։

Ընկերներ և քաղաքացիներ.

Հ. Յ. Դաշնակցութեան Չորրորդ Ընդհանուր Ժողովի ուշադրութիւնից վրիպած չէին այն բազմատեսակ վրդովիչ կեղեքումները, որոնց ենթակայ էր և է տակաւին մասամբ՝ Կարսի շրջանի հայ գիւղացիութիւնը մի խումբ ինքնակոչ «յեղափոխականների» կողմից։ Դրանց շարքում գտնւում էին նաև մի քանի նախկին դաշնակցականներ, որոնք շարունակում էին մութ անկիւններում շահագործել կուսակցութեան անունը։

Իբրեւ այս արգահատելի կացութեան մի դարման տանելու նպատակով, Ընդհ. Ժողովը մասնաւորապէս յանձնարարեց Հ. Յ. Դ. Կովկասի Ահաբեկիչ Մարմնին հարկաւոր միջոցները ձեռք առնել՝ մաքրելու Կարսի շրջանը այդ կեղեքիչներից։

Ահաբեկիչ Մարմինս ի լրումն անցեալ 1907-ի գարնան և ամառուան մէջ ձեռք առած արտակարգ միջոցներին՝ որոնք մասամբ միայն կարող էին զգաստացնել այդ չարագործներին, վերջերս դիմեց աւելի կտրուկ միջոցի։

Գրաւոր կերպով պահանջ դրեց այդ զեղծարարներին պարագլուխներից Օշանաւորին՝ Խլաթցի Աւագին (մականունով «Առիւծ») մինչև մայիս 20 հեռանալ իր խմբով դէպի Բաթում այնտեղ սպասելով Քննիչ Ատեանի հրաւէրին։ Հակառակ այն յօժարութեան որ Աւագը կանխաւ յայտնել էր թէ գրաւոր կերպով և թէ իր մէկ ազգականի միջոցով ենթարկւելու կազմակերպութեան որոշումներին — նա ոչ միայն մերժում է ատեանի հրաւէրը, այլ և հրապարակաւ նախատալից հայհոյանքներ է թափում յեղափոխական կազմակերպութեան նասցէին։

Ուստի Ահաբեկիչ Մարմինս նկատելով,

Որ Խլաթցի Աւագը իր գլխին հաւաքելով անգործների մի խմբակ չարաչար կեղեքում է գիւղացիներին Հ. Յ. Դաշնակցութեան լիազօր խմբապետի անունով,

Որ նա կատարել է բազմաթիւ բռնաբարութիւններ,

Որ նա կատարել է կամ մեղսակից է եղել անմեղների սպանութեան,

Որ նա իր ներկայութեամբ Կարսի շրջանում քաջալերում է հակայեղափոխական և աւազակային տարրերի զարգացումը,

Որ նա, հակառակ մինչև հիմա իրեն նկատմամբ ցոյց տրւած ներողամտութեան, ոչ միայն չէ ուղղւել, այլ օրից օր ևս աւելի լրբացել ու անբարոյացել, և իր շահատակութիւնների անպատիժ մնալովը,

Վնասել Հ. Յ. Դաշնակցութեան հմայքին,

Ահաբեկիչ Մարմինը միաձայն որոշեց մահւան պատժի ենթարկել նրան։

Մայիսի 17-ին ահաբեկիչների խումբը գործադրում է վճիռը հրացանազարկ անելով Աւագին և նրա երկու ընկերներին Համբարձումին և Մաւրակցի Գրիգորին, որոնք փորձում էին պաշտպանել նրան։

Յայտնելով այս բոլորը ի լուր հասարակութեան, Ահաբեկիչ Մարմինս ներկայիս պահանջում և հրամայում է բոլոր նրա նմաններին, որոնք բոյն են դրել Կարսի շրջանում, անմիջապէս ձգել հեռանալ այդ շրջանից։ Հակառակ պարագային, այս առաջին ազդարարութիւնից յետոյ, նրանց անունները պիտի հրատարակւին և նրանց նկատմամբ ևս ձեռք պիտի առնւին խստագոյն միջոցները։

Առիթից օգտւում ենք մի անգամ ևս յայտարարելու որ Դաշնակցութիւնը ոչ մի խմբապետի իրաւունք տւած չէ Կարսի շրջանի գիւղերում նստելով դատ վարելու, տուգանք ստանալու ևայլն։

Հրաւիրում ենք հասարակութեանը անխնայ հալածել և խփել բոլոր նոյն կարգի զեղծարարներին, որոնք գալիս են բռնի պահանջներ անելու, Դաշնակցութեան կամ յեղափոխութեան անունից։

Ժամանակ է վերջապէս որ հասարակութիւնը ինքն էլ կազմակերպւի իր սեփական ուժերով, պաշտպանելու իր գոյքն ու պատիւը ամեն տեսակ խաչագողների և դրամաշորթների դէմ — որպէսզի Դաշնակցութեան ձեռք առած միջոցներն էլ պսակւին վերջնական յաջողութեամբ, ունենան տևուն հանգամանք, վերահաստատելով Կարսի շրջանում նախկին խաղաղութիւնը և բեղմնաւոր աշխատանքը։

20 մայիսի 1908 թ.

Հ. Յ. Դ.
ԿՈՎԿԱՍԻ ԱՀԱԲԵԿԻՉ ՄԱՐՄԻՆ

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Արեւմտեան Բիւրոն ստացած է՝

Զւիցերիա.—Նւէր մեկենասորդ Գրիգորէն 5 ֆր., Զ. Երազէն 7 ֆր.: Գումար 12 ֆրանկ:

Նաւահանգստի Կեդր. կոմիտէն՝

Ստացել է 1905 թ. յունիսի 29-ից յուլիս 3: Տէր-Ղազար 25 ռուբլի, Կ. Ակին 50, Պ. Պ. Խաչիկ 15, Բուլբուլ 25, Յարութիւն 50. Քէօմ 50, Բէգ 25, Եղբայրներ 100 Զ-Գր 100 Պ. Պ. 25, Ս. Ս. 50, Սպայ 50, Թամամ 25, Սար-խան 50, Կ. Ման 25, Նուր-բաղ 100 Բ. Տէր-Մ. 10, Եղ. Սում. 150: Գումար 925 ռուբլի:

ԱՊԱՍՏԱՆԻ ԿՈՄԻՏԷՆ.—1905 մարտ 20-ից նոյեմ. 26: Հետեւեալ խմբերից՝ Ծմակ գիւղի Կայծակ 5. 50, Նիժթիանի Կայծակ 7, Նորակազմի Արծիւ 8. 40, Ժայռի Առիւծ-բերդ եւ Ծերենց 36. 75, Միացեալ Գ. Մամիկոնեան 3. 60, եւս 3. 60, Հրանդեան Ծովագիւղ Առիւծ 12. 35, Միացեալ Գ. Մամիկոնեան 3. 60, Լեռնային Զրվէժ 3. 50, Լեռնային Արածանի 4. 50, Միացեալ Գ. Մամիկոնեան 3. 60, Հրանդեանից Երկաթ-հրաշ 24, Պաշտակ գ. Շանէն 10. 40, Անմահ գ. ճանիկ 337. 25, եւս 39, Երկաթ գ. Հրայր 12. 15, Անտառ գ. Վազր 101. 40, Միացեալ գ. Մամիկոնեան 3. 60, Երկաթ գ. Փայլակ 17. 80, եւս 69. 15, Զրվէժ 6. 80, Արածան 9. 50, Միացեալ գ. Մամիկոնեան 3. 60, Արտեւան գ. Զրվէժ 6. 50, Ընկեր- երիտաս. լեռնային կենդ. խմբերից 14. 75, Երկաթ գիւղ. Կար-Սէֆէր 28. 50, Ճանիկ գիւղի ամսավճարներ 18. 20, Ճանիկ գիւղ 350, Քրիստափոր գիւղ 101. 40, Երկաթ գ. Փայլակ 10. 5, եւս 26. 40, Սեւ ծով գ. գէյթունցիներից 30 Գումար 1317 ռուբլի 95 կոպէկ:

ԴԱՇՏԻ ԿՈՄԻՏԷՆ՝ 1907 յունիս դեկ.—Հետեւեալ խմբերից՝ Քաջալեր 28 ռուբլի, Հրայր 35, Պարթեւ 20, Քաջալեր 7, Մարտական 21, Քաջալեր 6, Մահ խ. անդամ Մամիկոնի պարտքի դիմաց 60, Հայկից սեպտ. 100, Զայրմայրից սեպտ. 100: Գումար 377 ռուբլի:

1905, 1906 եւ 1907-ին Նաւահանգստի հետեւեալ խմբերէն՝ Ծովասար 15. 20, Ծիրանկատար 36. 80, Ռոստոմեան 15, Տղմուտ գետ 58, Գիւզալ դարա 27, Մտրակ 23. 50, եւս 16, Առիւծ 25. 80, Ծովասար 13. 60, եւս Արաբից 1, Արշաւել 124, եւս Գրիգորից 5, եւս Նորակոչից 5. Ներսովբ 103, Տղմուտ գետ 17, Գիւզալ դարա 14, Քօսա դաղ 34, Աղբիւր-կամարա 4, Տղմուտ գետ 3, Մախին 38, Արիւն 30, Ռուբինեանց 33, Բագրատունեան-սապան 6, Աղբիւր ա. 4, Եփրատ 29.50, Սոչխան 60, Թուման 13.50, Ծիրանկատար 10.60, Իշխանեան 12, Մուշեղ 58, Գազան-Տարօնցի 43, Մանդաւէր 35, Սուրէնեան 52, Ազրայիլ 16. 80, Խաչէն 74, Սոչխան 2, Արշաւել Խ. Յ. Մէհրաբ 3, Արշաւել Խ. Յար. Զաւ. 3. Սեփան 65, Կաթիլ 114. 50, Մտրակ 63, Կարէգ 30, Արշաւիր Յ. Մ. Վ. 309 մեծ փամփուշտ, Ներսէհ Պ. Ալ. եւ Սեղ. 309 մեծ փամփուշտ, Դանօ, Պետրոս 204, մեծ փամփուշտ, Բլէչան 12, Մախին 67, եւս Եալթի նիւղից 34, Գիւզալ դարա 17, Վրիժառու նւէր 7. 60, Ռուբինեանց 50, Բագրատունեաց սապան 6, Քօսա-դաղ 8, Զարեւանդ 125, Քօսա-դաղ 20, Աղբիւր Կամարա 6, Առիւծ 30, Մանկունի 29. 80, Արշաւել 70. 20, Տղմուտ գետ 59. 50, Կարին 22, Գազան-Տարօնցի 42, եւս 14, Արծիւ բ. 8. 40, Ծովասար 13, Վարազդատ ա. 93. 90, Նոր-կեանք 36. 85, Վարիչ նւէր 7. 50, Աղբիւր ա. 8, Քաջալեր 40, Արիւն 30, Քօսա-դաղ 5, Ծիրանկատար 20. 40, Յառաջ 1. 50, Ճարտար 67. 50 Վարազդատ բ. 84. 60, Դերձակ 70. 50. Իշխանեան 8, Խաչէն 45, Սոչխան 61, Խիկար 10, Պողպատ 9. 40, Սոչխան Սարոսից նւէր 1, Արծիւ ա. 11. 50, Կարէն Նոր անդամներից նւէր 15, Առիւծ Վահան նւէր 1.50, Յոյս խմբի Յ. Տ. Հ. նւէր 14, եւս Զ. Հ. անդամներից նւէր 12, Առիւծ Աւետիսից 1, Առիւծ Արշակից 1, Յոյս անդամներից 26, Յառաջ 1. 50, Ներսովբ 69, Զրափի իշխան 60, Վիշապ այգինցի 10, Դերձակ սինից 6, Վրիժառու 4. 50, Վրիժառու Յովհաննէսից նւէր 1 ռուբլի,

(Շարունակելի)